Ազգ
Azg
armenian daily

17 ՄԱՐՏ 2004 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 46 (2971)

Թուրքիայի զինված քաղաքացիներ անարգել մտնում են Ախալքալաքի շրջան

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 16 ՄԱՐՏ, Ա-ԻՆՖՈ: Վրաստան-Թուրքիա պետական սահմանի Ջավախքի հատվածի վրաստանյան կողմի անպաշտպանվածությունը խիստ մտահոգություններ է առաջացնում սահմանամերձ հայկական գյուղերում: Ամենից խոցելին թերեւս Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղն է, այն գտնվում է սահմանի անմիջական հարեւանությամբ: Վերջին ամիսներին, երբ վրաստանյան սահմանապահ ուղեկալի էլեկտրաէներգիան մատակարարվեց թուրքական ուղեկալից, ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց գումար գանձելու համար նույնիսկ «օրինականացվեց» Թուրքիայի քաղաքացիների առանց պաշտոնական թույլտվության մուտքը Վրաստանի Ախալքալաքի շրջան: Այսօր սովորական է դարձել թուրքերի ներկայությունը Կարծախում: Նրանք իրենց հետ սովորաբար զենք են կրում, իսկ դա անգամ կարծախցիների նոր մտավախություններն է առաջ բերում: «Այսօր Վրաստանի իշխանությունները, որպես քաղաքացիների անվտանգության երաշխավոր, պետք է մտահոգվեն սահմանների հարցով: Եթե երկրի սահմանները խոցելի են եւ թշնամին առանց նվազագույն դիմադրության հանդիպելու կարող է հայտնվել երկրի սահմանների խորքում, այդ դեպքում ինչ իմաստ ունի ներքին հարցերով զբաղվելը», ասում է ցանկացած պահի թուրքական հարձակման վտանգն զգացող կարծախցի Ասոմ Աբաջյանը:

ՀԲԸՄիությունը հայտարարեց Մելգոնյան վարժարանը փակված

Հուզում, լաց եւ բողոքի ցույց աշակերտության կողմից

Երեկ սեւ, սեփ-սեւ օր էր հայ ազգային կրթության համար: 2005 թ. հունիսից սկսյալ Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը ամբողջովին կփակի իր դռներն աշակերտության առաջ: Այս մասին երեկ առավոտյան առաջինը հայտարարել է Մելգոնյան վարժարանի տնօրեն Անի Լաչինյանը դպրոցի դահլիճում հավաքված ուսուցչական կազմի եւ ամբողջ աշակերտության առաջ: 78 տարվա փառավոր պատմություն ունեցող դպրոցի մասնակի փակումը տեղի կունենա արդեն առաջիկա ուսումնական տարեշրջանին, երբ, ինչպես տեղեկացրել է **«Ազգը»** նախապես, դպրոց չեն ընդունվի գիշերօթիկ աշակերտները, բացառությամբ վերջին 6-րդ եւ 7-րդ (11 եւ 12) դասարանների գիշերօթիկների, որոնք անգլիական պետական քննություններ (GCE) են հանձնելու: Գիշերօթիկների արգելքը պատճառ է դառնալու, որ դպրոցի 230 աշակերտներից ընդամենը 61-ը, այսինքն՝ միայն կիպրոսցի աշակերտները հաճախեն: Մնացյալը, որոնք 16-17 տարբեր երկրներից են, այդ թվում նաեւ Հայաստանից եւ Արցախից, ստիպված կլինեն այլ դպրոց ընտրել: Իսկ հաջորդ՝ 2005 թ. հունիսին արդեն, ինչպես ասվեց, կիպրոսցի աշակերտներն էլ պարտադրված կլինեն այլ, այս պարագայում օտար դպրոց գնալ՝ նկատի ունենալով, որ Կիպրոսում բացի Մելգոնյանից հայկական ուրիշ միջնակարգ կրթօջախ չկա:

Տեսարան 1924 թ. ՄԿՀ-ի հիմնարկության հանդիսությունից: Կիպրոսի հոգեւոր առաջնորդ Պետրոս եպս. Սարաջյանը օրհնում է հիմնաքարը:

Տես ♦ էջ 2

Գոբլ. «Ադրբեջանը սոսկ թվում է ուժեղ պետություն»

ՄՈՍԿՎԱ, 16 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պաշտոնական Բաքվի այն պատճառաբանությունները, թե Հայաստանի հետ հակամարտությունը թույլ չի տալիս Ադրբեջանին ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնել, անհիմն են եւ քննադատության չեն դիմանում: Այս մասին «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի եթերում հայտարարել է ամերիկյան հայտնի քաղաքագետ Պոլ Գոբլը: Ըստ նրա, «դրսից բխող սպառնալիքները հաճախ օգտագործվում են իբրեւ իրավական պետության ստեղծման գործընթացի արգելակման արհեստական պատճառ»: Ինչպես հաղորդում է «Ռոսբալտ» գործակալությունը, Գոբլի կարծիքով անհանգստացնող հանգամանք է, որ Ադրբեջանը դեռ չի դարձել իրավական պետություն՝ երկրում չկան քաղաքացիական հասարակության հաստատություններ, ընտրությունները ազատ եւ արդար չեն անցկացվում: Ադրբեջանի զարգացման վրա բացասական ազդեցություն են գործում կայուն պետական հաստատությունների չգոյությունը, կոռուպցիայի առկայությունը, ժողովրդավարության հետ կապված խնդիրները, նշել է քաղաքագետը, ավելացնելով, որ այսօր Ադրբեջանը սոսկ թվում է ուժեղ պետություն:

ՆՈՐ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Սաակաշվիլին խոստանում է երկու շաբաթվա ընթացքում շնչահեղձ անել «Առյուծին»

Աջարիայի շրջափակումն ուղղակի հարված է նաեւ Հայաստանի տնտեսությանը

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Երկուշաբթի՝ ուշ երեկոյան, լրացավ Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլու՝ Աջարիայի ինքնավարության առաջնորդ Ասլան Աբաշիձեին ներկայացրած վերջնագրի ժամկետը: «Առյուծը», ինչպես եւ սպասվում էր, անտեսեց Սաակաշվիլու վերջնագրի պայմանները, որին հետեւեց ինքնավարության տնտեսական շրջափակումը: Սաակաշվիլին հայտարարել է, որ երկու շաբաթվա ընթացքում Աջարիայի վարչակազմը սպառելու է իր բոլոր ռեսուրսները:

Սաակաշվիլին Աջարիայի առաջնորդից մասնավորապես պահանջել էր Վրաստանի նախագահին հնարավորություն տալ ազատորեն տեղաշարժվելու ինքնավարության տարածքում, հանդիպելու բնակչությանը (Վրաստանի նախագահը նշում էր, թե ինքը փորձում էր Աջարիա մեկնել բացառապես խաղաղ նպատակներով, ավելի կոնկրետ՝ հանդիպել ընտրողներին: Մարտի 28-ին տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ), զինաթափել Աբաշիձեի 1500 հոգանոց անօրինական զինված խմբավորումը, Վրաստանի իշխանություններին թույլ տալ վերահսկել Բաթումի նավահանգիստը եւ վրաց-թուրքական սահմանի Սարպիի մաքսակետը:

Աբաշիձեն հայտարարել էր, որ չի կատարի Սաակաշվիլու վերջնագրի պայմանները, սակայն պատրաստ էր բանակցությունների: Վրաստանի նախագահը, սակայն, դիմեց կտրուկ միջոցների, եւ երեկվանից փաստորեն Աջարիան տնտեսական շրջափակման մեջ է: Մասնավորապես Սաակաշվիլու հրամանով սառեցվել են Աջարիայի ղեկավարության հետ կապ ունեցող կազմակերպությունների բանկային հաշիվները, Աջարիայում գործող բանկերի արտոնագրերը չեղյալ են համարվել, թուրք-վրացական սահմանի աջարական հատվածում գտնվող Սարպիի մաքսակետը, Բաթումի նավահանգիստը եւ օդանավակայանը չեն գործում նախկին ռեժիմով եւ շրջափակման մեջ են, եւ, ըստ Սաակաշվիլու, «Աջարիայի իշխանությունների ֆինանսական աղբյուրները կանխվելու են մինչեւ այն ժամանակ, քանի դեռ նա (Աբաշիձեն) չգա գիտակցության»:



Տես ♦ էջ 5

ՆԱՏՕ-ի շրջանակում թուրքական բանակը դասընթացներ է անցկացնում Ադրբեջանում

ԲԱՔՈՒ, 16 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի պաշտպանության նախարարության տեսչության ղեկավար գեներալ-մայոր Սամեդ Բեյդուլաեւը հայտարարել է, որ այդ երկրի պաշտպանության նախարարության ուսումնակրթական համալիրում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում թուրքական բանակը «Սահմանային անվտանգության վերահսկողությունը» թեմայով դասընթացներ է անցկացնում: Ադրբեջանական «Թուրան» գործակալությունը հայտնել է, որ այդ դասընթացները պետք է շարունակվեն մինչեւ մարտի 19-ը եւ նրան պետք է մասնակցեն ՊՆ, արտգործնախարարության, ազգային անվտանգության եւ սահմանային ծառայությունների ներկայացուցիչները: Դասընթացների անցկացումը նպատակ ունի տեղեկացնելու միջին հրամանատարական կազմին այն միջոցառումներին, որոնք անհրաժեշտ են կիրառել սահմանների եւ մարտական կանոնների խախտման այնպիսի դեպքերում, երբ սահմանով անօրինական կերպով անց են կացվում թմրանյութեր, մարդու օրգաններ, զենք եւ այլ արգելված առարկաներ:

Իրանը պաշտոնապես հաստատել է, որ մարտի 27-ին կընդունի ՄԱԳԱՏԷ-ի տեսուչներին

ՏՈԿԻՈ, 16 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանը պաշտոնապես հաստատել է, որ մարտի 27-ին կընդունի ՄԱԳԱՏԷ-ի տեսուչներին: Տեսուչներին ընդունելու Իրանի համաձայնության մասին այսօր Տոկիոյում կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Հասան Ռոուհանին: «Մենք ոչ մի պայման չենք առաջադրում», ընդգծել է նա: Որ Իրանը մարտի 27-ին կընդունի տեսուչներին, երկուշաբթի օրը Վաշինգտոնում հայտնել էր ՄԱԳԱՏԷ-ի ղեկավար Մուհամեդ ալ Բարադեյը՝ վկայակոչելով երկրի ղեկավարության հետ ձեռք բերված համաձայնությունը: Անցած ուրբաթ օրը Թեհրանը հայտարարել էր երկիր ՄԱԳԱՏԷ-ի տեսուչների ժամանումը հետաձգելու որոշման մասին, դրանով իսկ դժգոհություն հայտնելով ՄԱԳԱՏԷ-ի Կառավարիչների խորհրդի նստաշրջանում ընդունված բանաձեւից, որում Իրանը քննադատության էր ենթարկվել միջազգային փորձագետներից առանձին կարեւոր տեղեկություններ թաքցնելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Ծխելու մշակույթ օրենսդրական սահմանափակումների միջոցով

Հրաժարվել սատանայի ծառայությունից

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հակածխախոտային պայքարը Հայաստանում ամենացածր մակարդակում է: Ավելին, մեր հանրապետությունում ծխախոտի բիզնեսը տնտեսության մեջ ամենաակտիվ զարգացող ու մինչ օրս (վերջին 1-2 տարվա սահմանափակումները չհաշված) ամենաշատ գովազդված ապրանքներից է:

Ծխախոտի վնասների մասին ավելորդ է խոսել: Ինչպես ամենուր, Հայաստանում էլ քաջ գիտենալով դրա վնասակարության մասին, այնուամենայնիվ, շարունակում են ենթարկվել օրգանիզմը քայքայող այդ դանդաղ գործող ականի ազդեցությանը: Երեկ պառլամենտում առաջին ընթերցման էր ներկայացվել «Ծխախոտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:



Ծխելու մշակույթ, այն ինչ վաղուց ի վեր իրողություն է եվրոպական ու ամերիկյան բազում երկրներում, մեր հանրապետությունում ընդհանրապես չկա: Ավելին, վերջին տասնամյակում ծխողների զանգվածն անընդմեջ ավելացնում են ուսանողները, երիտասարդ աղջիկներն ու կանայք: Բնականաբար, դժվար է հույսեր փայփայել, թե օրենքի ընդունումից, ասենք, նույնիսկ 5 տարի անց հայերս նույնպես կհրաժարվենք ինքնասպանության այդ տարբերակից: Համենայն դեպս, հենց օրենքի նախագծի քննարկումների օրը եւ պատգամավորները, եւ լրագրողները ակտիվորեն շարունակում էին ծխել նախասրահում:

Տես ♦ էջ 3

Երեկ տեղի ունեցավ Հայաստանի գրողների միության նախաձեռնող խմբի կազմակերպած Հայաստանի մտավորականության ներկայացուցիչների համաժողովը՝ նվիրված 1921-ի մարտի 16-ի ռուս-թուրքական եւ հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերին: «Ճակատագրական օրինաչափությամբ մեր ժողովրդի նոր եւ նորագույն շրջանների մեջ գրեթե բոլոր միջազգային պայմանագրերում Հայաստանին միշտ էլ վիճակվել է աղքատ գաղթականի ռուսական պատվիրակությունների բանակցությունները, հանդիպումները: Ըստ նրա երբ խորհրդային Հայաստանի թիկունքում ծավալված խարդավանքներից անտեղյակ հայկական պատվիրակությունը հասավ Մոսկվա, գերմարդկային ճիգեր էին պահանջվելու որեւէ արդյունքի հասնելու համար: Հրաչիկ Սիմոնյանը նշեց, որ թուրքական պատվիրակության անդամ, Մոսկվայում Թուրքիայի առաջին դեսպանը 1955-ին Ստամբուլում լույս ընծայած «Մոսկովյան հուշեր» գր- ենթարկված երկրին թույլ տալ լինել եղեռն իրականացնողի տիրապետության տակ:

Ելույթ ունեցավ գրող-հրապարակախոս Զորի Բալայանը, որը կարեւորեց յուրաքանչյուր հայի այս գործին զինվորագրվելու անհրաժեշտությունը: «Ողջ աշխարհում չգիտեն՝ ինչ է տեղի ունեցել 83 տարի առաջ», ասաց նա:

Հայտարարության տեքստում ասվում էր, որ «Այժմ Արցախի խնդրով բանակցություններին Ադրբեջանը դնում է իր փախստականների վերա-

Հայաստանի դեմ՝ «բարեկամաբար եւ եղբայրաբար»

Անիրավազոր հայտարարել 1921 թ. Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը

կարգավիճակը, բայց այն գործարքը, որ վավերացվեց 1921-ի մարտի 16-ի ռուս-թուրքական տխրահռչակ պայմանագրով՝ ստվերի տակ թողեց նախընթաց բոլոր հայադավ հանցագործությունները, քանզի Աթաթուրք, Լենին, Ստալին եռյակի քաղաքական առեւտուրը աննախադեպ դաժան էր եւ մեկընդմիշտ կոտրեց հայոց ողնաշարը», բացման խոսքում ասաց Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը: Նա նշեց, որ «Բարեկամության եւ եղբայրության» կոչով մոսկովյան այդ դաշնագրով առանց իսկ Հայաստանի մասնակցության «բարեկամաբար եւ եղբայրաբար» մի անգամ եւս վերածվեց շարժելու կավի մեջ փոքրացող Հայաստանի քարտեզը: Իսկ 1921-ի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով թուրքը վերջնականապես պատռեց իր «բարեկամական» դիմակը:

Խնդիրը ներկայացրեց նախաձեռնող խմբի անդամ, օրվա հիմնական բանախոս, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը: «1915-21 թվականները հայոց հազարամյակների պատմության ամենաողբերգական ժամանակահատվածներից են, ասաց նա: Դարեր շարունակ բազում արյունահեղ պատերազմներ մղած, առաջին աշխարհամարտի ժամանակ միմյանցից 100 հազարավոր զոհեր խլած Ռուսաստանը եւ Թուրքիան ճակատագրի քմահաճույքով առաջին անգամ 1920-ի կեսերից հանդես եկան որպես դաշնակիցներ»: Ապա ներկայացրեց թուրքական եւ քում վկայում է, որ մինչ պայմանագրի ստորագրումը թուրքական պատվիրակության եւ Ստալինի հանդիպման ժամանակ իրենց այն հարցին, թե կոնֆերանսում քննարկվելո՞ւ է Հայաստանի հարցը, Ստալինը պատասխանել է. «Դուք Հայաստանի հարցը հենց ինքներդ լուծեցիք, թե դեռ լուծվելիք ինչ-որ բան է մնացել, ինքներդ վճռեք, բայց վերջնական պատվերի մասին մեզ տեղյակ պահեք»:

1921-ի մարտի 16 պայմանագրի համաձայն խորհրդային Հայաստանը կորցրեց ավելի քան 25.000 քառ. կմ տարածություն, ըստ որում Թուրքիան խլեց 19.915 քառ. կմ, մնացածը 5.500 քառ. կմ-ին տեր դարձավ Ադրբեջանը: Խորհրդաժողովի որոշումների մասին հայկական պատվիրակությունը տեղեկացավ հետո՝ որպես կատարված իրողություն:

Ըստ բանախոսի՝ առ այսօր այդ կողոպտիչ գործարքին Հայաստանի կողմից քաղաքական եւ իրավական պաշտոնական գնահատական չի տրված, իսկ Հայաստանի երրորդ հանրապետությունը, լինելով խորհրդային Հայաստանի իրավահաջորդ, այդ ակտն իրականացնելու համար ունի քաղաքական եւ իրավական բոլոր կռվանները:

«Նախիջեւան» հայրենակցական միության նախագահ Ռաֆայել Համբարձումյանն իր ելույթում նշեց, որ Արցախի խնդրի լուծման ժամանակ անպայման պետք է բարձրացնել եղեռնի հարցը, քանի որ չի կարելի եղեռնագործության դարձի խնդիրը եւ պահանջում հետ դարձնել իր իսկ սանձազերծած պատերազմի ընթացքում պատմական Հայաստանի ազատագրված տարածքները, առաջարկում Հայաստանից իր երկրին միջանցք տրամադրել միանալու Նախիջեւանի ինքնավար հանրապետությանը եւ միաժամանակ շարունակում է բարբարոսաբար ոչնչացնել Նախիջեւանի հայկական հուշարձանները:

Հայաստանը պետք է ձեռնարկի համազոր քայլեր:

Համաժողովը կոչ է անում ՀՀ ԱԺ-ին դիմել ՌԴ Պետդումային անիրավազոր ճանաչելու 1921-ի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերը, չեղյալ հայտարարել 1921-ի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը եւ ՀՀ կառավարությանն՝ առաջարկել՝ Արցախի բանակցություններում ներառել Նախիջեւանի հարցը՝ պահանջելով նաեւ, որ Նախիջեւանի երկրամասից տեղահանված հայ փախստականներին տրվեն իրենց ծննդավայրերում վերաբնակվելու իրավունք եւ անվտանգության միջազգային երաշխիքներ»:

«Եթե ճիշտ է, որ ազգի պատմությունը մեռյալների, ողջերի եւ դեռ չծնվածների սրբազան դաշինքն է, ուրեմն մենք չմարած պարտքեր ունենք հատուցելու թե անցյալի հիշատակներին, թե գալիքի սերունդներին», ասաց Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

«Արմինկոն» պատրաստվում է դասի տալ «Արմենտելին»



«Արմենտելի» պատճառով ինտերնետ կապի ամենախոշոր պրովայդեր «Արմինկոն» վերջին 1-1,5 տարում մոտ 1 մլն դոլարի վնաս է կրել: Այդ մասին երեկ հայտարարեց «Արմինկոյի» գլխավոր տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանը: Նա նաեւ նշեց, որ իր ղեկավարած ընկերությունը վերջերս խնդրել է «Արմենտելին» կապուղի տրամադրել, բայց անցել է խոստացված 1 ամսից էլ ավելի ժամանակ, իսկ կապուղին չի տրամադրվել: Անդրանիկ Ալեքսանյանի կարծիքով, «Արմենտելը» դիտավորյալ է այդ քայլերին դիմում, որպեսզի վնասի իր ղեկավարած ընկերությանը եւ նրա բաժանորդներին:

Բացի վերոնշյալից, հեռահաղորդակցության ոլորտում մենաշնորհ ունեցող ընկերությունը նամակ է հղել «Արմինկոյին», որտեղ վերջինիս ստեղծած կաբելային ցանցը համարել է ապօրինի, որը ենթակա է քանդման: «Արմենտելը» ոչինչ չի կառուցում, իսկ ստեղծածն էլ քանդում է», նշեց Անդրանիկ Ալեքսանյանը, ավելացնելով, որ իրենք դիմել են «Արմենտելին», խնդրելով ստեղծել այդ ցանցը, ապա առաջարկել են համատեղ ստեղծել եւ վերջապես այդ ամենը կյանքի չկոչելուց հետո որոշել են իրենք ստեղծել սեփական ցանցը: «Արմինկոյի» ղեկավարը, պատասխանելով **«Ազգի»** հարցին, հայտնեց, որ իրենք առաջիկա 1 ամսվա ընթացքում դիմելու են դատարան, իսկ մինչ այժմ դա չեն կատարել, որպեսզի չվնասեն իրենց մատուցած ծառայություններից օգտվողներին, որոնց կապը «Արմենտելը» կարող է կտրել: Վերջիններիս թիվը, ըստ Անդրանիկ Ալեքսանյանի, 5 հազար է: Ընկերությունը դիմել է նաեւ Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին:

«Արմինկոյի» տնօրենը մտահոգված էր «Արմենտելի» հետ հետագա հարաբերություններով: Նա այն կարծիքը հայտնեց, որ մենաշնորհի վերացումից հետո էլ պրովայդերները կբախվեն «Արմենտելի» խոչընդոտներին: Այդուհանդերձ, եթե այս ոլորտում մենաշնորհը վերացվի, ապա «Արմինկոն» կստեղծի սեփական ռադիոռելեային ցանցը, եւ «Արմենտելն» այդ դեպքում ինքը կմտահոգվի իր կապուղիները վարձակալության տալու հարցով: «Արմինկոն» մտադիր է նաեւ սեփական կաբելային ենթակառուցվածքները ծավալել Մեղրիից մինչեւ Վրաստանի սահման եւ այլ ընկերության հետ պայմանագիր կնքել միջազգային ելք ունենալու համար: Ա. Մ.

ԲԵՅՐՈՒԹ

«Զարթօնք»-ի յաւելուածը՝ արաբերէն լեզուով

ملحق
زارتونك

ՌԱԿ Լիբանանի շրջանակի պաշտօնաթերթ «Զարթօնք»-ի մարտ 14-ի թիւով կցեալ, ընթերցողներն ստացան արաբերէն լեզուով յատուկ լրացուցիչ համար մը, որ յետայսու ամէն ամիս լոյս պիտի տեսնէ ու բաժնուի պետական, կառավարական, քաղաքական եւ դիւանագիտական շրջանակներուն, ինչպէս նաեւ հասարակութեան:

«Զարթօնք»-ի յաւելուածը, որ նախաձեռնութիւնն է ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչութեան, կը միտի օտար եւ յատկապէս արաբ հասարակութիւնը տեղեակ պահել նախ կուսակցութեան գաղափարախօսութենէն, պատմութենէն ու գործունէութենէն, ապա նաեւ տեղեկութիւններ հայթայթել հայրենի իրականութեան, հայկական հարցի ու պահանջատիրութեան եւ ընդհանրապէս հայութիւնը յուզող, շահագրգռող հարցերու մասին:

Յաւելուածականին մէջ լոյս պիտի տեսնեն նաեւ տեղական, շրջանային ու միջազգային յօդուածներ, ստորագրուած ծանօթ գրիչներու կողմէ:

Կը յուսանք որ այս օրինակելի նախաձեռնութիւնը կ՚արժանանայ Լիբանանի հայ թէ արաբ հասարակութեան գնահատանքին, ինչ որ աւելի կը պարտաւորեցնէ պատասխանատուները:

ՌԱԿ Մամլոյ կեդրոնական դիւանը կ՚ողջունէ այս օգտակար նախաձեռնութիւնը արաբ ատողջական երկիրներու ժողովուրդին ծանօթացնելու արդար մեր իրաւունքները եւ լիբանանեան հայրենիքէն ներս աւելի ամուր քաղաքական գործունէութեան մը հեռանկարով տեսնելու ՌԱԿ-ը:

«Զարթօնք» արաբերէն լեզուով յաւելուածի խմբագիրն է ընկեր Յովիկ Ներսէսեանը:

Յիշեցնենք, որ արաբերէն լեզուով թերթ հրատարակելու ՌԱԿ-ի այս նախաձեռնութիւնը 2-րդն է եգիպտոսի «Արեւ» օրաթերթի արաբերէն յաւելուածէն ետք:

ՌԱԿ ՄԱՄԼՈՅ ԿԵԴՐ. ԴԻՒԱՆ

ՀԲԸՄիությունը հայտարարեց Մելգոնյան վարժարանը փակված

Սկիզբը՝ էջ 1

Դպրոցի փակման որոշումը նախորդ օրը կայացրել էր Հայկական բարեգործական ընդհանուր միության ղեկավար մարմինը՝ Կենտրոնական վարչական ժողովը՝ ատենապետ Լուիզ Սիմոն-Մանուկյանի, փոխատենապետ եւ գանձապահ Նազար Նազարյանի եւ նախագահ Պերճ Սեդրակյանի գլխավորությամբ: Որոշման մասին պաշտոնական հաղորդագրության մեջ ՀԲԸՄիության ղեկավարությունը հայտարարում է, որ «լայն կշռադատումներից եւ ամբողջական գնահատումներից հետո Կենտրոնական վարչությունը միաձայն վճռեց դադարեցնել ՄԿՀ-ը 2005 թ. հունիսին: Այս որոշումը գերազանցապես հիմնված է վարչության եզրակացության վրա, թե ՄԿՀ-ն այլեւս չի կարող ստանձնել իր առաքելության մարտահրավերները հայաշխարհի ներկա կոնտեքստում»:

Այսքանը: Ոչ մեկ բացատրություն, թե Կենտրոնական վարչական ժողովի պատկառելի անդամներն ինչպես են հանգել նման եզրահանգման եւ կամ ինչպես են «կշռադատել», որ դա էր ճիշտ լուծումը: Միայն ասվում է, որ «վարչությունը լրիվ ընդունում եւ հարգանք է տածում տեսիլք ունեցող Մելգոնյան եղբայրների ժառանգության նկատմամբ եւ վճռել է նրանց հիշատակը հավերժացնել կրթական նոր ծրագրերով, որոնք պիտի իրականացվեն Կիպրոսում եւ նրա սահմաններից դուրս, նրանց կողմից ՀԲԸՄիությանը կատարված նվիրատվության ոգուն համահունչ»:

Ավելորդ է ասել, թե տնօրենուհու հայտարարությունն ինչ հուզմունքով է ընդունվել ուսուցիչների եւ աշակերտության կողմից: Ցած իջնելով դահլիճից, աշակերտները շրջապատել են բակում Մելգոնյան բարերար եղբայրների դամբարանը, երգել են Կիպրոսի եւ Հայաստանի հիմները, ապա արտասվախառն ձայնով կատարել վարժարանի քայլերգը՝ «Անմահ լույս»: Ավելի ուշ նրանց ձեռքում հայտնվել են ինքնագիր պաստառներ՝ «Աթաթուրքը մեր վրա պիտի խնդա», «Աշակերտության ապագան գողնալը ոճիր է», մինչ տեղական հեռուստաընկերությունների լրագրողները նրանց հարցուփորձ էին անում: Աշակերտները որոշել են 1 ամբողջ շաբաթ դասադուլ անել: Այսօր տեղի կունենա նաեւ աշակերտների ծնողների ժողով, մինչ շրջանավարտների միությունը պատրաստվում է դասի տալ դպրոցի փակման որոշումը:

Ռոբերտ Քոչարյանի որդիները գնալու են բանակ

ՀՀ նախագահը երեկ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում լրագրողներին հավաստիացրեց, որ իր երկու որդիներն էլ ծառայելու են: «Ֆիզիկական հնարավորությունների առումով պրոբլեմներ չեն ունենա, ձողից 10-ից ավելի անգամ կարող են ձգվել», ասաց Ռոբերտ Քոչարյանը: Հայաստանի նախագահն ունի երկու որդի՝ Սեդրակ Քոչարյանը 23 տարեկան է, ավարտել է ԵՊՀ-ի միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը, կրտսերը՝ Լեւոնը, 19 տարեկան է, ուսանում է ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի 2-րդ կուրսում:

Հայաստանի զինված ուժերի գերագույն հրամանատարը, անդրադառնալով «դեդովշչինայի» խնդրին, նշեց, որ «մեր բանակում, ինչպես աշխարհի զարգացած երկրների բանակներում, կա («դեդովշչինա»), բայց ծավալի առումով համոզված եմ, որ (հայկական բանակում) որակ չի կազմում»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԴ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ /հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ /հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարումը
«Ազգ» թերթի

Թերթի նյութերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Անցուդարձ

Եղեք մեր կողքին եւ մենք ձեզ կօգնենք, ասում էր մարզպետը

Կառավարության անդամների հերթական այցն Արարատի մարզ էր: Այնթապ գյուղի կենտրոնում գյուղապետ Լեւոն Թարվերդյանը ներկայացրեց 7 կետից բաղկացած դժգոհությունները՝ գազի հաճախակի անջատումների, սերմացուի բացակայության, պարարտանյութի, խմելու եւ ոռոգման ջրի եւ մի շարք այլ հարցերի շուրջ: Արարատի մարզպետ Ալիկ Սարգսյանը մարզի բնակչությանը հավաստիացրեց, որ 2004 թ. մարզի համար կլինի բեկումնային, քանզի մինչ այժմ նման ֆինանսավորում չի եղել: Իսկ այնթապցիները միաձայն դժգոհում էին:



Գյուղի տարեցներից մեկը՝ Մեսրոպ Մաթեւոսյանը, դժգոհում էր, թե ինչու Աստծո կողմից տրված ջուրը փողով են վաճառում գյուղացուն: Թամար Ավագյանը բողոքում էր, որ խմելու ջուրը միշտ պղտոր է, «կարմիր որդերը լողում են մեջը բավական չէ, տիղմի համից չենք կարողանում խմել առանց եռացնելու: Արդեն մի քանի ամիս ընտանիքով փորացավից տառապում ենք: Բոլորին տեղեկացնում ենք, բայց ոչ մեկը բանի տեղ չի դնում, ի՞նչ անենք»: Դպրոցի խորհրդի նախագահ Միքայել Միքայելյանը դժգոհում էր, որ գազի անջատման հետեւանքով դպրոցի 3-րդ հարկի մանրահատակը պոկվել է, եւ հիմա իշխանություններն ընկած փող են հայթայթում, որ վերանորոգեն դպրոցը:

Ավազուտ թաղամասի բնակիչ Աշոտ Բաբայանն էլ դժգոհում էր, որ 100 հեկտարից ավելի հողեր չեն ոռոգվում: Իսկ հիմնական դժգոհությունները վերաբերում էին գազի անհարկի անջատումներին: Վերջին 1 տարվա ընթացքում, ինչպես պնդում էր բնակչությունը, Մասիսի տարածքային գազի գրասենյակը 4 պատասխանատուի է փոխել, եւ անգամ գազի վճարումներ կատարածների անհարկի անջատումները հաճախացել են: «Հայռուսգազարդի» տնօրեն Կարեն Կարապետյանը պարզաբանեց, որ Այնթապի բաժանորդներն իրենց պարտք են 28 մլն դրամ, եւ դա բացառված դեպք է, որ նման պարտքեր ունենալու դեպքում գազ մատակարարվի տարածքին: Իհարկե, նա նշեց, որ Այնթապում որոշակի աշխատանքներ կան անելու: Այս մի քանի տարիների ընթացքում կուտակված պարտքերի համար, որոնք կազմում են 17 մլն դրամ, «Հայռուսգազարդը» կոշտ որոշումներ չի կայացնում, այլ մշակել է հատուկ ժամանակացույց, որի ընթացքում հնարավոր կլինի կամաց-կամաց մարել կուտակված պարտքերն՝ առանց գազի անջատումների:

Այնթապի ամբուլատորիայի տնօրեն Սեդա Սարգսյանը տեղեկացրեց, որ վերջին ժամանակներս բնակչությանը զգուշացրել են խմելու ջուրն օգտագործել միայն եռացնելուց հետո, իսկ ամբուլատորիան, իհարկե, կարիք ունի բուժսարքավորումների: Առողջապահության նախարար Նորայր Դավիդյանը նշեց, որ նախատեսված է մարզին տրամադրել 60 մլն բուժսարքավորումներ, նաեւ 100 հազար եվրո արժողությամբ ռենտգենյան ապարատ՝ համայնքին:

Ջրային տնտեսության ղեկավար Գագիկ Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ Այնթապ գյուղի ջրամատակարարման հարցը միայն երեկ է ներկայացվել իրենց եւ իրենք միջոցներ կձեռնարկեն խնդիրները լուծելու համար: Նա նշեց, որ ներկայումս ոռոգման ջրի ինքնարժեքը համայնքում կազմում է 14,6 դրամ, եւ պետությունը պահպանել է նախորդ տարվա սակագինը՝ 6,5 դրամ, այս տարվա համար նույնպես: Վերջին օրերին կառավարության որոշմամբ հարեւան 15 համայնքները միավորվել են եւ ստեղծվել է մեկ «Մասիս-գյուղեր» մասնաճյուղ, որով էլ կլուծվի ոռոգման ջրի խնդիրը, իսկ խմելու ջրի հարցում բնակչության համաֆինանսավորման խնդիր մարզում չկա, նշեց պրն Մարտիրոսյանը: Իսկ Նոր Խարբերդ գյուղի մշակույթի տունը լրիվ ավերված ու քանդված վիճակում սպասում է շինարարներին, որոնք մի քանի օրից կսկսեն աշխատանքները, ինչպես խոստացել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր նախընտրական քարոզարշավի ժամանակ՝ տրամադրելով 70 հազար դոլար գումար:

Բուրաստան գյուղի գյուղապետ Ֆրունզ Առաքելյանը առաջնահերթության կարգով նշեց գազի, խմելու եւ ոռոգման ջրի խնդիրները, իսկ կապ ասած հասկացությունը (հեռախոս կամ ռադիո) գոյություն չունի: Միայն մեկ հեռախոս է գյուղապետարանում 2330 բնակչություն ունեցող գյուղի համար, նշեց պրն Առաքելյանը: Մասիսի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Հասմիկ Իսկանդարյանը դժգոհում էր, որ ուսուցչի աշխատավարձը 30 հազար է եւ չի բավականացնում անգամ վարձավճարները մուծելու: Ըստ նրա, գոնե 70 հազարի դեպքում հնարավոր կլիներ նվազագույն ծախսերը փակել եւ քիչ թե շատ բարվոք ապրել: Մաթեմատիկայի ուսուցչուհի Մարինե Արզումանյանն առաջարկում էր, որ մանկավարժների նկատմամբ վարձավճարների զեղչ սակագներ կիրառվեն, որով էլ կլուծվի խնդիրներից մեկը: Իսկ սահմանամերձ գոտու շուրջ 100 հա հողատարածքներում գարնան գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար անցաթղթերի ձեռքբերումը պրոբլեմ է դարձել:

Տարածքային նախարար Հովիկ Աբրահամյանը, ամփոփելով մարզում հանդիպումները, նշեց, որ բոլոր մարզերում համարյա նույն խնդիրներն են, եւ իրենք անպայման հետամուտ են լինելու եւ լուծելու են: Նա նշեց նաեւ, որ մարզում վերանորոգվում է 17 դպրոց, անցկացվում են 8 ջրագծեր, համայնքային ճանապարհներ, վերանորոգվում են մշակութային օջախներ: Նա հավաստեց, որ գյուղացու ջուրը երբեք չի կտրվի ոռոգման շրջանում, իսկ պարարտանյութն ու սերմացուն կմատակարարվեն ժամանակին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ծխելու մշակույթ օրենսդրական սահմանափակումների միջոցով

Սկիզբը էջ 1

Օրենքը նախատեսում է ծխախոտի եւ ծխախոտային արտադրանքի օգտագործման ու վերահսկման պետական քաղաքականության, պետական ծրագրի մշակում ու իրականացում: Եթե մոտ ապագայում այն իսկապես գործողության մեջ մտնի, ապա շատ շուտով անհարմարավետության ոչ հաճելի զգացողություններ կապրեն ծխախոտի սպառողները հասարակական վայրերում ու հաստատություններում: Արգելանքների ցանկը բավականին ընդարձակ է՝ ծխելն արգելվելու է մշակութային, կրթական, առողջապահական հաստատություններում, քաղաքային տրանսպորտում եւ փոխադրամիջոցների բոլոր տեսակներում: Իհարկե, հարկադրանքով կամ կոշտ սահմանափակումներով մարդկանց հնարավոր չէ համոզել հրաժարվել վատ սովորույթից (եթե մինչ այժմ իրենք չեն որոշել նույնն անել): Սակայն անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծումը ծխողների հանդեպ եթե ոչ շուտ, հետո անպայման պտուղներ կտա:

Օրենքի պահանջի համաձայն հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարները կպարտավորվեն ծխախոտի գործածության միկրոմիջավայր, ասենք՝ ծխելու առանձնացված գոտիներ ստեղծել աշխատատեղերում:

Ռեստորաններում, սրճարաններում եւ սննդի սպասարկման այլ վայրերում նույնպես պետք է առանձնացվեն փակ տարածքներ՝ նույն նպատակով: Ընդդիմանալու դեպքում եւ ֆիզիկական, եւ իրավաբանական անձինք կենթարկվեն վարչական պատասխանատվության: Պատժատեսակն ու տուգանաչափերը կսահմանվեն ենթաօրենսդրական ակտերով: Այնուամենայնիվ, օրենքը չի հուշում, թե, օրինակ, ռեստորանի տերը ի՞նչ մեխանիզմով է վարչական տուգանքի ենթարկելու կարգը խախտած այցելուին:

Կարեւոր սրբագրումներ են լինելու ծխախոտային ապրանքատեսակների իրացման գործընթացում: Այսպես, 18 տարին չլրացած երեխաներին արգելվում է ծխախոտ վաճառել: Արգելվում է նաեւ չափահաս չդարձած անձանց ծխախոտ վաճառել: Այս դրույթն առկա է նաեւ Հակածխախոտային շրջանակային կոնվենցիայում՝ վաճառողը եթե կասկածներ ունի գնորդի տարիքի վերաբերյալ, կարող է չափահասությունը հաստատող վկայական պահանջել:

Ինչ վերաբերում է ծխախոտի գովազդի արգելմանը, ապա մեր պատգամավորները հատուկ վերաբերմունք արտահայտեցին ծխախոտի արտադրությամբ զբաղվող գործարարների հանդեպ, որոնց խոշոր ներկայացուցիչն, ի դեպ, ԱԺ պատգամավոր է: Կարծիքներ հնչեցին՝ մեր տնտեսվարողներին չվնասելու համար գոնե ինտերնետում չպետք է արգելել ծխախոտի գովազդը:

Մի խոսքով, հրաշալի պահանջներ, հրաշալի ցանկություններ, որոնք, այս անգամ, առանց եվրոպայի պարտադրանքի, մեզ պիտի ազատեն մեր առողջության հանդեպ անխելամիտ, անգիտակից վերաբերմունքից:

Համենայն դեպս, ըստ բժիշկների ոչ մի տարիքում ուշ չէ ծխախոտից հրաժարվելը: Ծխելը թողնելուց հետո նիկոտինը կարճ ժամանակում լքում է օրգանիզմը, մեկ ամսվա ընթացքում ճնշումն իջնում է, արագորեն բարելավվում է թոքերի աշխատանքը, իսկ 5 տարի անց արդեն կաթված ստանալու հավանականությունը հավասարվում է չծխողի մակարդակին: Ահա այսպիսի լավատեսական խոստումներ նույնիսկ նրանց, ովքեր արդեն իսկ զգում են ծխախոտի աննպաստ ազդեցությունը: Իսկ որոշ մասնագետների համոզմամբ, ծխախոտից կախվածությունը ավելի շատ հոգեբանական, քան ֆիզիոլոգիական դրդապատճառներ ունի:

ԱՐՁԱԳԱՆՔ

Անպատժելիության դեմ

Մեծ Բրիտանիայի դեսպանի հայտարարության արձագանքները

Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Թորդա Էբբոթ-Ուոթի հունվարի 20-ին հրավիրած ասուլիսի ընթացքում Հայոց ցեղասպանությանն արված անդրադարձը դեռ շարունակում է զայրույթի եւ պահանջի ալիք բարձրացնել մեր հայրենակիցների շրջանում: Այս անգամ **«Ազգի»** խմբագրությանն են դիմել շվեյցարական մի քանի կազմակերպություններ՝ Նեոշաթել-Ժիրայրի հայկական համայնքը, Ժնեւի հայ տիկնանց միությունը, Շվեյցարիա-Հայաստան ընկերակցությունը, եւ ՀՀ, ԱԺ նախագահներից, ԱԳ նախարարից պահանջում են հատուկ օրենսդրական եւ դիվանագիտական միջոցներ ձեռնարկել հայ ժողովրդի հիշողության դեմ ուղղված նմանատիպ վիրավորական հայտարարությունները կանխարգելելու նպատակով: Բացի այդ, նշված կազմակերպությունները պահանջում են նաեւ Մեծ Բրիտանիայի դեսպանի հրապարակային ներողությունը հասարակությունից հակառակ դեպքում նրանք գտնում են, որ պետք է տվյալ դեսպանի ներկայությունը Հայաստանի Հանրապետությունում անցանկալի հայտարարվի:

Կազմակերպություններն իրենց պահանջները հիմնավորում են նախ այն փաստով, որ արդեն աշխարհի 15 պետություններ ու խորհրդարաններ եւ միջազգային կարեւոր կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ի խտրականության կանխարգելման եւ փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնախումբը, Եվրոպական խորհրդարանը եւ եկեղեցիների տիեզերական խորհուրդը, պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Կազմակերպությունները Հայաստանի կառավարության լուռ եւ ձեռնպահ կեցվածքը Հայոց ցեղասպանությանն ուղղված արդեն երկրորդ հայտարարության հանդեպ անընդունելի համարելով, ընդգծում են, որ այդպիսի հայտարարություններն անպատիժ թողնելը կարող է ամրապնդել թուրքական կառավարության առկա ժխտողական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ:

Ն. Պ.

Կանայք շարունակում են համախմբվել

Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը «Կանանց հանրապետական խորհուրդ» եւ «Հասարակական երկխոսությունների եւ նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունների հետ Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնի շենքում այսօր կանցկացնի մամլո ասուլիս:

Հասարակական կազմակերպությունների ղեկավարները լրագրողներին կտեղեկացնեն «Քաղաքացիների իրազեկությունը եւ մասնակցությունը Հայաստանում» ծրագրի գործունեության մասին, ինչպես նաեւ կներկայացնեն միջազգային եւ տեղական կազմակերպությունների համագործակցությունը համայնքի զարգացման հարցում:

Ընտրական համակարգերի միջազգային հաստատության Վաշինգտոնյան գրասենյակի ներկայացուցիչները կխոսեն Հայաստանում եւ այլ երկրներում իրականացված քաղաքացիական ծրագրերի մասին:

«Էյ Սի Փի» սպառնում է պղինձը ձուլել հին տեխնոլոգիաներով

Ինչը հետին պլան կմղի բնապահպանական խնդիրների լուծումը

2003 թ.-ի գործունեության արդյունքները երեկ լրագրողներին ներկայացրին «Էյ Սի Փի» ընկերության խորհրդի նախագահ Վալերի Մեջլումյանը եւ «Վալլեքս» խմբի մյուս ընկերությունների տնօրենները:

«Բեյզ մեթլս» ընկերությունը ստեղծվել եւ գործում է Լեռնային Ղարաբաղում: Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի շրջակայքում գտնվող պղնձի-ոսկու հանքավայրի շահագործման նպատակով 2003 թ.-ին ստեղծվեց հարստացուցիչ ֆաբրիկան: Ընկերության տնօրեն Արթուր Մկրտումյանը, անդրադառնալով ձեռնարկության աշխատանքին, նշեց, որ մինչ այժմ արդյունահանվել է 56 հազար տոննա հանքաքար, իսկ բնապահպանական առումով խնդիրները կարգավորված են: Այստեղ 6 մլն դոլարի ներդրումներ են կատարվել, իսկ աշխատակիցների թիվը մոտ 700 է:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն, որի բաժնետոմսերի 60 տոկոսը պատկանում է «Էյ Սի Փի» ընկերությանը, իսկ 40 տոկոսը 194 մարդուց բաղկացած կոլեկտիվին, պայմանագրային հիմունքներով գիտահետազոտական եւ նախագծային աշխատանքներ է կատարում համակարգի ձեռնարկությունների համար: Իսկ «Վալլեքս Մայնինգ» ընկերությունը երկրաբանահետախուզական գործունեություն է ծավալել Տանձուտի ոսկի-կոլչեդանային հնարավոր հանքավայրում:

Խմբի գլխավոր «Էյ Սի Փի» ընկերության 2003 թ.-ի ցուցանիշները ներկայացրեց գործադիր տնօրեն Գագիկ Արզումանյանը: Նա հայտնեց, որ անցյալ տարի ձեռնարկությունը սկսել է աշխատել շահույթով, համալրվել է ընկերության կանոնադիր կապիտալը: Գործադիր տնօրենը հատուկ անդրադարձավ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գծով գերավճարի կուտակմանը, ասելով, որ դա խոչընդոտում է արտադրության վերազինմանը: Նա հայտնեց, որ ԱԱՀ գերավճարը կազմել է մոտ 800 մլն դրամ, ինչը գերազանցել է շահույթին: Գագիկ Արզումանյանը գերավճարի վերադարձման հետ կապեց նաեւ Ալավերդիում բնապահպանական խնդիրների լուծման հարցը եւ սպառնաց, որ հակառակ դեպքում հնարավոր է, որ կատարվի հետ քայլ եւ արտադրությունը կազմակերպվի հին տեխնոլոգիաներով:

Ի դեպ, հարկ ենք համարում նշել, որ 1999 թ.-ից, ինչ այս ընկերությունը գործում է Ալավերդիում, նրա ղեկավար Վալերի Մեջլումյանը տեղի բնակիչներին մշտապես խոստանում է 4 տարվա ընթացքում լուծել բնապահպանական խնդիրները: Անցել է 5 տարի, իսկ ընկերությունը արդեն խոստանում է ոչ թե լուծել, այլ ընդհակառակը չլուծել այդ խնդիրը, պատճառաբանելով գերավճարները: **«Ազգի»** հարցին, թե ընկերությունը կատարե՞լ է շահութահարկի գծով վճարումներ, գործադիր տնօրենը պատասխանեց, որ մինչ այժմ ընկերությունն աշխատել է վնասով, (ինչին, մեղմ ասած, դժվար է հավատալ), սակայն այս տարի ունեցել է շահույթ, որից շահութահարկ կվճարվի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բնապահպան

Երբ դադարում է լսվել բնության կանչը

Երեւանի Կենտրոն թաղամասի շենքերից մեկի մի բնակչուհի ամեն առավոտ կոտլետներ էր պատրաստում, խնամքով ու պատշաճաբար առաջին հարկի իր պատշգամբի պատի տակ շարում բակի շների համար: Հարեւանները զարմանում էին: Շատերն ասում էին (դժվար տարիներ էին), թե մարդկանց մեծ մասը սոված է, իսկ սա դրսի շներին ու կատուներին է կերակրում: Կինը վաղուց էր շների հետ բարեկամացել, տանը շուն էր պահում, որը ժամանակին որդուն փրկել էր գետում խեղդվելուց: Երախտագիտության տո՞ւրք էր, թե՞ կենդանիների հետ անբացատրելի կապ, դժվար է ասել: Հիմա նա այստեղ չէ, բնակվում է ԱՄՆ-ում: Երեւանաբնակ մի կին ասում էր, թե ինքը չի ուզում Հայաստանում այլեւս ապրել, որովհետեւ հայաստանցիները կենդանիներ չեն սիրում, նրանք սպանում են շներին: Սրա մեջ ճշմարտություն, իհարկե, կա: Բազմիցս ենք ականատես եղել կենդանիների հետ անգութ վերաբերմունքի թե երեխաների, թե մեծահասակների կողմից: Մի ժամանակ ատելություն կար այն մարդկանց նկատմամբ, ովքեր տներում կենդանի էին պահում: «Երեխայի հետ այնպես կապված չէ, ինչպես շան», ու արհամարհական մի բան նույնպես կար «դե, տանը շուն է պահում ու ո՞նց է խնամում»: Հոգեպես սնանկ ու անբավարար մարդիկ մոռանում էին գյուղաբնակների կենցաղի եւ կենդանիների հետ նրանց համագոյակցության մասին: Անտեսվում էր հոգեբանական մի գործոն եւս. կենդանու, ծառի, թփի նկատմամբ հոգատարություն ու խնամք ունեցողը զգայուն ներաշխարհի տեր մարդ է վստահաբար, եւ այդ սերը բազմապատիկ արտահայտվում է երեխայի, հիվանդի, ծերունու եւ առհասարակ անպաշտպան էակների հանդեպ: Սա է ճիշտ ապրելակերպը, որ մարդու եւ բնության ներդաշն միաձուլվածության նախասկզբնական էության կանչն է, որ ժամանակի մեջ, ցավոք, աղավաղվել է:

Բուսակերների ակումբի անդամներից մեկը պատմում էր, որ իրենց ընտրած կենսակերպը պայմանավորված է ոչ միայն առողջապահական խնդիրներով, այլեւ սրանով իրենց բողոքն են արտահայտում կենդանական աշխարհի նկատմամբ մարդկանց վայրագությունների դեմ: «Կենդանիների սպանդ հանուն մարդու ստամոքսային տենդի», այդպես են որակում մսակերությունը եւ գտնում են, որ կենդանիների նկատմամբ ունեցած վերաբերմունքով կարելի է չափել մարդու գթության աստիճանը:

Հիմա անդրադառնանք այսօրվա մեր քաղաքին: Արդյոք Երեւանն իր համաքաղաքացիների համար օտարանո՞ւմ է այստեղ ապրող 8 կամ 10 հազար շների պատճառով: Իսկ գուցե այս քաղաքում ապրող բնակչության զգալի մասի անհոգի, «խիղճը գրպանը դրած» մթնոլորտի՞ց: Արդյոք մեր քաղաքի հեղձուցիչ միջավայրի պատճառը կանաչ զանգվածը կողոպտող, բնաբարողները չե՞ն իրենց աներեւակայելի ընչաքաղցությամբ:

«Ազգը» պարբերաբար անդրադառնում է բնապահպանության խնդիրներին՝ կանաչ տարածքների պահպանմանը եւ կենդանիների պաշտպանությանը: «Նովոյե վրեմյա» թերթում մարտի 4-ին տպագրվել է մի հոդված՝ «Чей он город: собак или людей?», որն անուղղակի արձագանք է փետրվարի 25-ի **«Ազգ»** օրաթերթում տպագրված «Քաղաքացիներն ընդդեմ թափառող շների ոչնչացման» նամակ-բողոք-խնդրանքին:

Քաղաքակրթության մակարդակը երբեւէ չի կարող չափվել ռեստորանաշինությամբ կամ սրճարանապաշտությամբ: Դրանց առատությունից ոչ միայն մենք ենք շփոթվել, այլեւ քաղաքի շները: Բայց դժվար թե որեւէ երեւանաբնակ վկայի, թե որեւէ ռեստորանի կամ սրճարանի առաջ զամփռ շների այնպիսի կուտակումներ կան, ինչպես վերոհիշյալ թերթի հրապարակման լուսանկարում է պատկերված: Այդ պատկերը ոչ միայն հեռու է երեւանյան իրականություն լինելուց, այլեւ առհասարակ մեզ հետ կապ չունի: Երեւանի կենտրոնական հատվածներից, օրինակ, Մերգելյանի ինստիտուտի մերձակա այգու շրջակայքում մի ժամանակ թափառող շներից հատուկենտ կենդանիներ են մնացել: Մի քանի շներ, որ ընտելացած տարածքի բնակիչներին, բարեկամացել են նրանց հետ: Կամ շուկայի կողմերում են երեկոյան թափառում, դնչերը մտցրած աղբակույտերի մեջ, կամ բակերում որեւէ ծածկի տակ մտած պատսպարվում են «շառ ու փորձանքից» հեռու, ամառներն էլ շոգից ծուլացած մրափում են գազոնների կանաչների վրա: Նրանք խեղճացած ու մի փոքր վախեցած են ավելի: Փոքր ու միջին չափի շներ են հիմա փողոցներում թափառում, որոնք ոչ վտանգավոր են, ոչ էլ ագրեսիվ, գուցե պատճառն այն է, որ նրանք դարձել են Երեւանի բակերի բնակիչ եւ իրենց դրացիները հիմնականում կանայք ու երեխաները, ուշադրություն են դարձնում կենդանիներին, կերակրում ու խնամում են:

Անտարակույս է, որ շներ ու կատուներ չհանդուրժող մեր համաքաղաքացիների մի զանգված պատրաստ է ամենասադիստական պահանջների դիմել քաղաքապետարաններին խնդրելով քաղաքում շնահաչը դադարեցնել դրանց սպանելու միջոցով: Իսկ շների գիշերային անվրդով ու սահուն սպանդը մեր քաղաքում վաղուց է կատարվում: Հիմա առաջարկվում է ոչնչացման իբր ավելի «մեղմ» տարբերակ: Փողոցներում չսպանել, հավաքել եւ Երեւանից հեռու մի անմարդաբնակ տարածք տանել ու ոչնչացնել: Գոնե բնակիչները չեն լսի սպանվողի կաղկանձը եւ առավոտյան արյան հետքերից չեն ազդվի: Սակայն ինչ տարբերություն, մի՞թե դրանից փոխվում է երեւույթի էությունը, նույն վայրագությունը չէ՞ (տարիներ առաջ գիշերային փողոցները սանրող ոստիկանների հերթական շնասպանդից հետո 5 տարեկան աղջնակը, որ ամեն օր կերակրում էր բակի շներին, շատ ծանր ապրումներ ունեցավ: Իսկ դպրոցական ծրագրերում դեռ շարունակում են ընդգրկել «Կենդանիները եւ մենք», «Շունը մեր բարեկամն է» վերնագրերով թեմաներ: Բարեկամության հրաշալի օրինակ է, չէ՞, անպաշտպան կենդանիների հարցերը լուծել հրազենի կրակոցներով):

Այն դեպքում, երբ 20 մլն դրամ հատկացվում է (դեռ 300 հազար էլ համայնքների կողմից) քաղաքը թափառող չորքոտանիներից մաքրելու համար, ինչո՞ւ դա վատնել սպանելու վրա, երբ քաղաքակիրթ մարդկությունը վաղուց ընտրել է միանգամայն հումանիստական ճանապարհ՝ հատկացնելով համապատասխան տարածք, ստեղծելով բուծարաններ, որտեղ նրանց խնամում են, բուժում հիվանդություններից, կանխելով դրանց փոխանցելիությունը, անհակակշիռ բազմացումը եւ այլն: Երբ մենք հակված ենք օր առաջ ընդօրինակելու արեւմտյան քաղաքակրթական նվաճումները (եւ առաջին հերթին մեր ազգային նկարագրին անհարիր երեւույթները), ինչո՞ւ փութկոտորեն չենք արձագանքում այս օրինակելի վարքին եւս: Որովհետեւ կենդանական աշխարհն անկարեւո՞ր ենք համարում, որովհետեւ կենդանիներ չե՞նք սիրում: Թե՞ ավելի դյուրին ճանապարհ ենք ընտրում՝ միանգամից սպանել եւ հարցը փակել: Բայց մի՞թե սպանությունը դյուրին գործ է...

Մարդու անսահման եսամոլությունը կարող է նրան տանել ինքնակործանման: Բնությունից մարդու այսչափ հեռացումն իր ապագա ողբերգության ազդանշաններից է: Մենք մի մոլորակի բնակիչներ ենք, մենք մարդն ու թռչունը, հողն ու ջուրը, ծառն ու թուփը: Համաշխարհային ջրհեղեղից առաջ Աստված Նոյին պատվիրեց տապան կառուցել, եւ այդ տապանի մեջ պատսպարվելու համար վերցնել որդիներին, կնոջն ու որդիների կանանց եւ երկրի վրա եղած անասուններից ամեն տեսակից երկուական արու եւ էգ, երկրի վրա նրանց սերունդը պահպանելու համար: Մենք ինչ ենք անում իրար նկատմամբ անտարբերությամբ, հաճախ ատելություններով ամլացնում ենք մեր հողը հեռանալով երկրից, ոչնչացնում ենք բնությունը ծառակոտորածներով, սպանում ենք կենդանիներին գիշերը հանգիստ քնելո՞ւ համար... Պարզապես մենք դադարել ենք լսել բնության կանչը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հ. Գ. «Ազգ» օրաթերթին փետրվարի 25-ին ներկայացրած բողոք-խնդրանքով կենտրոն համայնքի բնակիչները դիմել են նաեւ քաղաքապետարան: Կենդանիների պաշտպանության նոր ձեւավորվող հասարակական կազմակերպությունը շարունակելու է իր ակցիան՝ դիմելով տարբեր ատյանների՝ ընդհուպ կենդանիների պաշտպանության միջազգային կազմակերպություններին:

Օրերս քաղաքապետարանից տեղեկացրել են, որ բնակիչների դիմումին կտրվի գրավոր պատասխան, որ իրենք էլ հակված են հետեւելու քաղաքակիրթ երկրներում ընդունված եւ կիրառվող հումանիստական մեթոդներին: Հուսանք:

Հայաստանում թռչունների պահպանության խնդիր ունենք

Մասնագիտական հաշվարկները ցույց են տվել, որ այսօր ողջ Արարատյան դաշտավայրում ավելի քիչ բադ կա, քան Երեւանյան լճում: Հիմնական պատճառը ուղղակի եւ անուղղակի հետապնդումներն են:

Հայաստանում որսը թույլատրված է օգոստոսից մինչեւ մարտի 15-ը թռչունների բնադրման շրջանի սկիզբը: Սակայն Հայաստանի թռչունների պահպանման միության նախագահ Մամիկոն Ղասաբյանը կարծում է, որ ժամկետները պետք է կրճատվեն մինչեւ դեկտեմբերի 31-ը, քանի որ հունվար-փետրվարը ջրլող թռչունների գոյատեւման եւ կեր հայթայթելու համար ամենադժվար ամիսներն են:

Արդեն 2 տարի Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հայաստանի թռչուններ» նախագիծը միության հետ Երեւանյան լճում կազմակերպում է ջրաճահճային թռչունների կերակրում, որպեսզի վերջիններս կերի համար չթռչեն Արարատյան դաշտավայր եւ որսորդի զոհ չդառնան: «Որսորդների շարքում հանդիպում են ինչպես կարգապահներ, այնպես էլ մարդիկ, որ չեն նայում թռչունը կոնչյան բա՞դ է, սուզաբա՞դ, ծկնկո՞ւլ, որսում են ամեն պատահածը», ասում է «Հայաստանի թռչուններ» նախագծի հետազոտող Կարեն Աղաբաբյանը: Եթե Երեւանյան լճի վիճակը պահպանվի, ջուրը մնա նույն մակարդակի վրա, ապա հետագայում բադերին Երեւանյան լճում պահելու նպատակով կարելի է նաեւ արհեստական բնադրավայրեր պատրաստել:

Թռչունների կերակրելուն մասնակցում են ոչ միայն նախագծի եւ միության անդամները, այլեւ դպրոցականներ: Նախագծի տնօրեն Լեւոն Ջանոյանը գտնում է, որ էկոդաստիարակությունը հասարակության մեջ պետք է երեխաներից սկսել: Միայն երեխան կարող է ազդել ծնողի հոգեբանության վրա: Երեխաների դաստիարակության լավագույն ձեւը նրանց որոշակի աշխատանքներում ներգրավելն է: Մի քանի ամիս է նախագիծը եւ միությունը Գյումրիում էկոակումբ են ստեղծել, որտեղ երեխաների համար դասընթացներ են կազմակերպում, անդամներին ընդգրկում հետազոտական աշխատանքների մեջ: Նման աշխատանքներից մեկն է Գյումրիում ագռավազգիների հաշվառումը: Փորձը ցույց է տվել, որ երեխաները հետաքրքրությամբ մասնակցում են այդ աշխատանքներին: Վերջերս բնապահպանական եւ հետազոտական աշխատանքներ են սկսել նաեւ Երեւանի Քվանտ վարժարանի 8-10-րդ դասարանցիների հետ:

Խնդիր ունենք նաեւ Սեւանա լճում: Մամիկոն Ղասաբյանն ասում է, որ Հայաստանը կորցրել է ձմեռանոց լինելու նշանակությունը: Այսօր Սեւանա լճում բազմաթիվ ձկնորսական նավակներ կան, որոնց ներկայությունը վախեցնում է թռչուններին, վերջիններս էլ պարզապես այնտեղ չեն մնում: Եթե նախկինում Սեւանում հաշվվում էր 30-50.000 թռչուն, այժմ այդ թիվը իջել է 2-3.000-ի:

Ըստ Կարեն Աղաբաբյանի՝ նրանք չեն կարող պայքարել դրա դեմ, Սեւանի ձկնորսներն ավելի շատ վնաս են տալիս ձկներին, որոնց հաճախ ապօրինի որսում են: Եթե ձկան մասին այդքան բան ասվել է, եւ ոչ մի միջոց չի կիրառվել, թռչունների մասին խոսք լինել չի կարող: Նա հավաստիացնում է, որ այս ոլորտի օրենսդրությունը Հայաստանում նորմալ է, սակայն այդքան էլ լավ չի գործում: Լավ չեն ֆինանսավորվում բնապահպանության ոլորտի աշխատողները, որոնք անմիջապես շփվում են հասարակության հետ եւ հսկում տարածքը: Դրա հետեւանքով կամ լավ չեն աշխատում, կամ սկսում են կաշառակերությամբ զբաղվել:

Կարեն Աղաբաբյանն ասում է, որ Հայաստանում վտանգված տեսակները գիշատիչ թռչուններն են, դրանց սպառնացող վտանգը մարդու կողմից ուղղակի հետապնդումն է, կամ կրակում են, կամ էլ ձագերին բներից հանում վաճառքի հույսով: Բանն այն է, որ արաբական երկրներում ընդունված է բազեներով որս անելը: Այնտեղ մեծահարուստի ունեցած բազեների քանակով որոշվում է նրա հեղինակությունը: Հայաստանում բազմաթիվ դեպքեր են եղել, երբ վաճառքի նպատակով բռնել են գիշատիչ թռչուններ, սակայն հետագայում չեն կարողացել վաճառել կամ խնամել, թռչունը սատկել է:

Մամիկոն Ղասաբյանն ասում է, որ վերոնշյալը տեղի է ունենում այն ժամանակ, երբ գիշատիչ թռչունները գյուղատնտեսության մեջ առաջին օգնականներն են, դրանց համար հիմնական կեր են մկնանման կրծողները, որոնք մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Այսպիսով, վերջիններս հզոր կենսաբանական պայքարի միջոց են: Նպատակահարմար է թունաքիմիկատները փոխարինել գիշատիչ թռչուններով, եւ պահպանել ոչ միայն գիշատիչ թռչուններին, այլեւ հայրենի բնությունը:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Իսպանիայի նոր վարչապետն Իրաքից դուրս կբերի իսպանական զորքը

Իսպանիայի արտաքին քաղաքականության մեջ սպասվում է կտրուկ շրջադարձ: Կիրակի օրը երկրում անցկացված խորհրդարանական ընտրություններում քվեների 42,64 տոկոսն ստանալով հաղթել է Սոցիալիստական բանվորական կուսակցությունը: Դրա առաջնորդ, սոցիալիստ Խոսե Լուիս Ռոդրիգես Զապատերոն, որն Իսպանիայի ապագա վարչապետն է, երկուշաբթի հայտարարեց, որ Իրաքից դուրս կբերվեն նախորդ կառավարության օրոք այնտեղ ուղարկված իսպանական զորքերը: «Ֆիգարո» թերթի տվյալներով, Իսպանիայի նոր վարչապետը մտադիր է նաեւ «հնարավորինս արագացնել եվրոպական սահմանադրության ընդունումը»:

Ընտրությունների արդյունքների վրա զգալիորեն ազդեցին մարտի 11-ին Մադրիդի կայարաններում տեղի ունեցած ահաբեկչությունները, որոնց հետեւանքով (ըստ վերջին տվյալների) զոհվեց 200 եւ վիրավորվեց 1500 մարդ: 43-ամյա ապագա վարչապետ Զապատերոն դեռ ընտրություններից առաջ խոստացել էր Իրաքից դուրս բերել իսպանական զորքը: Նախկին վարչապետ Խոսե Մարիա Ազնարն իսպանացի զինծառայողներին Իրաք էր ուղարկել, միանալով ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի եւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի հակաիրաքյան կոալիցիային: Մադրիդում օրերս կազմակերպված ահաբեկչությունները փաստորեն Ազնարի այդ անհեռատես քայլի պատասխանն էին:

Զապատերոյի խոսքերով, Իրաքում տեղաբաշխված իսպանական զորքերը տուն կվերադառնան մինչեւ հունիսի 30-ը, երբ նախատեսված է վերականգնել իրաքցիների ինքնիշխանությունը: «Իրաքի պատերազմն աղետ էր: Օկուպացումն աղետ է», հայտարարել է վարչապետը, որն իրավաբանության նախկին դասախոս է: Նա Բուշին եւ Բլերին հորդորել է «զբաղվել ինքնաքննադատությամբ»: Միաժամանակ վարչապետը ընդգծել է, որ ահաբեկչության բոլոր ձեւերին վերջ դնելու լավագույն միջոցը քաղաքական ուժերի միասնությունն է:

Զապատերոն Իսպանիայի արտաքին քաղաքականության 3 գերակայություններն է համարում Եվրոպան, Լատինական Ամերիկան եւ Միջերկրածովքը: Նրա խոսքերով, «Իսպանիան կունենա խորապես եվրոպամետ կառավարություն», որը կբարելավի Իրաքի պատերազմի պատճառով Ֆրանսիայի, Գերմանիայի եւ այլ երկրների հետ վատացած հարաբերությունները: Իսպանական մամուլը լայնորեն անդրադարձել է նորընտիր վարչապետի հայտարարություններին, դրանք բնութագրելով «պատմական շրջադարձ»:

Պ. Ք.

Ազնարը փոխհատուցեց ամերիկամետ քաղաքականության համար

Իսպանական օրինակը խուճապահար է անում Վաշինգտոնին

Մարտի 11-ին Իսպանիան ականատես եղավ վերջին 14 տարիներին Եվրոպայի համար աննախադեպ ահաբեկչական պայթյուններին: Թերեւս այդ առումով պատահական չէ մադրիդյան ահաբեկչության համեմատությունը 2001 թ. Նյու Յորքի սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետ: Հարկ է, սակայն, նշել, որ անկախ համեմատությունից իսպանացիները ոչ թե ամերիկացիների պես խուճապահար փակվեցին տներում, այլ մեկ մարդու պես փողոց դուրս եկան եւ դատապարտեցին կատարված վայրագությունը:

Քանի որ մարտի 14-ի խորհրդարանական ընտրություններում հաղթանակի հասավ Խոսե Լուիս Ռոդրիգես Զապատերոյի Սոցիալիստական բանվորական կուսակցությունը, ուրեմն իսպանացիները ահաբեկչությունը դատապարտելիս ամերիկամետ քաղաքականության համար դատապարտեցին նաեւ վարչապետ Ազնարի ժողովրդական կուսակցությանը, որ երկրում վերջ տրվեց նրա 8-ամյա իշխանությանը:

Այլ կերպ Ազնարը փոխհատուցեց հակաիրաքյան պատերազմում ԱՄՆ-ին ցուցաբերած անվերապահ աջակցության համար, նրա հետ նաեւ ժողովրդական կուսակցությունը: Դա Ազնարին խուճապի մատնել էր, թե ոչ, դժվար է ասել: Բայց որ Իրաքից իսպանական զորքերը հետ կանչելու Սոցիալիստական բանվորական կուսակցության առաջնորդ Զապատերոյի պատրաստակամությամբ Վաշինգտոնը հետզհետե խուճապի է մատնվում, ակնհայտ է:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ ընթացիկ տարում Ավստրալիան եւ Ճապոնիան ականատես են լինելու խորհրդարանական, իսկ Ֆիլիպինները ու Հարավային Կորեան՝ նախագահական ընտրությունների: Նրանք որպես դաշնակիցներ, Իրաքի հարցում, ինչպես եւ Իսպանիան էր, անվերապահորեն աջակցում են ԱՄՆ-ին: Ինչ վերաբերում է Անգլիային, որն ամերիկյան դաշնակիցների մեջ առանցքային տեղ ունի, ապա այնտեղ որպես այդպիսին ընտրությունների հարց առայժմ գոյություն չունի, բայց վարչապետ Թոնի Բլերի Լեյբորիստական կուսակցության ժողովրդականության անկումը անդառնալի բնույթ է կրում:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Ավստրալիան, Ճապոնիան, Ֆիլիպինները ու Հարավային Կորեան Իսպանիայի օրինակին կհետեւեն, եւ այդ երկրների իշխանությունները եւս կփոխհատուցեն իրենց որդեգրած ծայրահեղ ամերիկամետ քաղաքականության համար: Ուրեմն չի կարող անհիմն լինել Վաշինգտոնի իսպանական օրինակի ծավալումով պայմանավորված խուճապը:

[illegible] ՉԱՔՐՅԱՆ

Պենտագոնը հարկադիր զինծառայության կկանչի ծրագրավորողներին

ԱՄՆ վարչակազմը մտադիր է զինծառայության կանչել հատուկ հմտություններ եւ մասնագիտություններ տեր քաղաքացիներին, մասնավորապես թարգմանիչներին եւ համակարգչի մասնագետներին: «Սան Ֆրանցիսկո քրոնիքլ» թերթը տեղեկացնում է, որ ներկայումս Պենտագոնի զորակոչային ծառայության աշխատակիցները եւ զինվորական իրավաբաններն անհրաժեշտ հիմնավորում են նախապատրաստում Կոնգրեսին համապատասխան հարցադրում ներկայացնելու համար:

Ծառայության ներկայացուցչի խոսքերով, դեռ անցյալ աշնանն արտասահմանում ռազմական գործողությունների իրականացման ժամանակ ամերիկյան բանակում մասնագետների սուր պակաս է զգացվել: Դրանից հետո սկսվել է հավելյալ զորակոչի ծրագրերի նախապատրաստությունը: Վերջին անգամ նման լայնածավալ զորակոչ իրականացվել էր Վիետնամի պատերազմի ժամանակ:

Թերթը նշում է, որ հիշյալ մասնագիտությունների տեր անձինք հարկադիր զորակոչի կենթարկվեն 1-2 տարի հետո, քանի որ խոսքը Պենտագոնի ռազմավարական ծրագրերի մասին է: ԱՄՆ հարկադիր զինվորական ծառայության համակարգում ընդհանուր առմամբ գրանցված է 18-25 տարեկան 13,5 մլն տղամարդ:

Էր Ռիադում սպանվել է բեն Լադենի նախկին թիկնապահը

Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր Ռիադում սպանվել են ահաբեկչական գործունեության մեջ կասկածվող երկու անձինք, որոնք դիմադրություն են ցույց տվել ձերբակալման պահին: Հատուկ ծառայությունների տվյալներ վկայակոչելով՝ այդ մասին հաղորդում է սաուդյան «Ալ Վաթան» թերթը:

Մայրաքաղաքի փողոցներից մեկում իրավապահ մարմինների իրականացրած գործողության ժամանակ երկուշաբթի օրն սպանվել են եմենցի Խալեդ Ալի ալ Հաջը եւ սաուդցի Իբրահիմ ալ Մազինին: Հաղորդվում է, որ 29-ամյա եմենցին անցյալում եղել էր թիվ 1 ահաբեկիչ Ուսամա բեն Լադենի անձնական թիկնապահը, իսկ վերջերս Պարսից ծոցի արաբական երկրներում վերահսկում էր ահաբեկիչների գործունեությունը: Խալեդ Ալի ալ Հաջը համարվում էր Էր Ռիադում անցյալ տարվա մայիսին եւ նոյեմբերին իրականացված ահաբեկչությունների կազմակերպիչներից մեկը:

Սպանված երկու ահաբեկիչների ավտոմեքենայում ոստիկանները գտել են նռնակներ, ավտոմատներ, ատրճանակներ եւ մոտ 140 հազար դոլար: Անցյալ տարվա նոյեմբերին Սաուդյան Արաբիայի ներքգործնախարարությունն սկսել էր մայրաքաղաք Էր Ռիադում մի քանի ահաբեկչություն կազմակերպած 26 ահաբեկիչների որոնումները: Այն ժամանակ պայթեցումների հետեւանքով 52 մարդ էր զոհվել:

Պ. Ք.

«Դուք ձեզ նայեք»

ԱՄՆ պետքարտուղարին ասում է Ռուսաստանի նախագահը

Մարտի 14-ին՝ ՌԴ նախագահական ընտրությունների օրը, երբ արդեն հայտնի էր դարձել Վլադիմիր Պուտինի հաղթանակը, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը ելույթ է ունենում: Նա դժգոհություն է հայտնում, որ ընտրությունները թափանցիկ չեն եղել եւ թեկնածուների համար չի ապահովվել լրատվամիջոցների միատեսակ մատչելիություն:

«Ազգը» մարտի 16-ի համարում տեղեկացրել էր Փաուելի դժգոհության մասին: Թուրքական «Զաման» թերթն էլ նույն օրը տեղեկացնում է այն պատասխանի մասին, որը Փաուելին տվել է ՌԴ նախագահը: Ըստ «Զամանի», Վլադիմիր Պուտինը հորդորել է, որ ԱՄՆ-ի պատասխանատուները Ռուսաստանին քննադատելիս անհրաժեշտ հետեւություններ անեն եւ իրենց երկրում բարելավեն ժողովրդավարական ընթացակարգերը: Այնուհետեւ ՌԴ նախագահը հիշեցրել է, թե աշխարհին ինչպիսի շփոթմունք էին պատճառել 2000 թ. ԱՄՆ-ում անցկացված նախագահական ընտրություններում թույլ տրված սխալները: Հ. Չ.

Սաակաշվիլին խոստանում է երկու շաբաթվա ընթացքում շնչահեղձ անել «Առյուծին»

Սկիզբը էջ 1

Արդեն երեկ Բաթում շարժվող 10 բեռնատար նավեր փոխել են ուղղությունը դեպի Փոթիի նավահանգիստ:

Թուրքիայից անդրկովկասյան հանրապետություններ ապրանքների մի մասը տեղափոխվում էր հենց Սարպիի մաքսակետով, ու քանի որ այն շրջափակման մեջ է, թուրքական ապրանքները երեկվանից Վրաստան, Ադրբեջան եւ Հայաստան են հասնում Սամցխե-Ջավախքի Վալե մաքսակետով:

Երկուշաբթի, ուշ երեկոյան Սաակաշվիլին մամլո ասուլիսում նկատեց, որ Էդուարդ Շեւարդնաձեի իշխանության տարիներին Աջարիայի իշխանությունները չէին ենթարկվում Վրաստանի կենտրոնական իշխանություններին, Աջարիայի մաքսակետերով Վրաստան ներմուծվող եւ արտահանվող ապրանքների դիմաց գանձվող գումարները չէին հասնում Վրաստանի կենտրոնական բյուջե, որի հետեւանքով տարեկան Վրաստանը կորցնում էր 200-300 մլն դոլար:

«Ես այս քայլերին դիմում եմ ապացուցելու, որ Վրաստանը պետություն է եւ ունի պետական սահման, օդային տարածություն, ունի ինքնիշխանություն եւ բյուջե, եւ այդ բյուջեն Վրաստանի քաղաքացիներից յուրաքանչյուրինն է, այլ ոչ թե որեւէ կլանինը», ընդգծել է Սաակաշվիլին:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն երեկ, ըստ «Նովոստի» գործակալության, հայտարարել է, որ պատրաստ է մեկնել Բաթում՝ բանակցելու Աբաշիձեի հետ: Բուրջանաձեի կարծիքով, ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքեր կան: Խորհրդարանի նախագահը նշել է, որ Աջարիայի հանդեպ տնտեսական սանկցիաների կոնկրետ ժամկետներ չկան, եւ նախագահ Սաակաշվիլին այդ միջոցառումները համարում է ազդեցության լծակներ, որպեսզի Աջարիայի իշխանությունները գնան կոնկրետ զիջումների:

Վրաստանով շահագրգիռ պետությունները արդեն արտահայտել են իրենց դիրքորոշումը Թբիլիսիի եւ Բաթումի գերլարված հարաբերությունների առնչությամբ: Ե՛վ Ռուսաստանը, ե՛ւ Միացյալ Նահանգները հայտարարել են վրաց-աջարական ճգնաժամում իրենց չեզոքության մասին: Ըստ Վրաստանի նախագահի, որ հեռախոսազրույցներ է ունեցել Վլադիմիր Պուտինի եւ ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի հետ, երկուսն էլ լիովին աջակցում են Վրաստանի նոր իշխանությունների քաղաքականությանը Վրաստանի ամբողջ տարածքում կարգուկանոն հաստատելու, կոռուպցիայի, քրեածին տարրերի եւ ամենաթողության դեմ պայքարի հարցերում:

Թուրքիայի արտգործնախարարությունը, ըստ «Ռեգնում» գործակալության, տարածել է հայտարարություն, որում նշվում է, թե Անկարան կարեւորում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, կայունությունը: «Թուրքիան ակնկալում է, որ կենտրոնական իշխանությունների եւ Աջարիայի ինքնավար հանրապետության լարվածությունը հաղթահարվելու է խաղաղ միջոցներով: Թուրքիան ուշադրությամբ հետեւում է իր սահմանների մյուս կողմում ընթացող գործընթացներին եւ պատրաստ է ամեն կերպ աջակցել կողմերին, որպեսզի առաջացած լարվածությունը վերացվի», ասվում է հաղորդագրության մեջ:

Ադրբեջանի արտգործնախարար Վիլայաթ Գուլիեւը մտահոգություն է հայտնել Աջարիայի ճգնաժամի առնչությամբ, չբացառելով, որ Թբիլիսիի եւ Բաթումի զարգացումները կարող են բացասաբար անդրադառնալ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի կառուցման վրա:

Հայաստանի բեռների մեծ մասն անցնում է Աջարիայով

Աջարիայի տնտեսական շրջափակումը լուրջ հարված կհասցնի Հայաստանի տնտեսությանը, մասնավորապես կարող է նկատվել արտահանման եւ ներմուծման ծավալների կտրուկ անկում, քանի որ Հայաստան ներմուծվող եւ արտահանվող բեռների մեծ մասն իրականացվում է Բաթումի նավահանգստով, որն արդեն երկու օր չի գործում:

Երեկ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ Վրաստանը եւ նրա սեւծովյան նավահանգիստները լուրջ կարեւորություն ունեն Հայաստանի համար: Մենք հույսով ենք, որ հակամարտող կողմերը կնստեն բանակցությունների սեղանի շուրջ եւ հարցը կկարգավորեն առանց բախումների, ասաց Քոչարյանը: Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը նշեց, որ կայունությունը Վրաստանում «մեզ համար չափազանց էական է, եւ մենք ցանկանում ենք, որ Վրաստանում լինի կայունություն»:

Հայաստանի մաքսային պետական կոմիտեի մամուլի ծառայությունից **«Ազգին»** տրամադրած տվյալների համաձայն, Հայաստան ներմուծվող եւ արտահանվող բեռների մեծ մասը բաժին է ընկնում Վրաստանին, մասնավորապես՝ Բաթումի նավահանգստին: Ինչ վերաբերում է Փոթիի նավահանգստին, ապա այնտեղով եւս բեռներ են հասնում Հայաստան եւ հակառակ ուղղությամբ, սակայն փոքր ծավալներով, քանի որ այս նավահանգիստը չունի մեծ հնարավորություններ: Մասնավորապես Բաթումի նավահանգստով են Հայաստան ներկրվում եւ արտահանվում վառելանյութը, ցորենը, շաքարավազը, շինանյութերը, խառը տնտեսական ապրանքները: Ավելի պարզ՝ Աջարիայի նկատմամբ Վրաստանի կենտրոնական իշխանությունների տնտեսական շրջափակումները հարվածելու են Հայաստանի շահերին, եւ այդ շրջափակումները շարունակվելու դեպքում Հայաստանում գների աճը կդառնա անխուսափելի:

Ներկայացնենք 2003 թ. երկու փաստաթղթեր, ավելի պարզ ցույց տալու, թե որքան կարեւոր է Վրաստանը որպես տարանցիկ երկիր Հայաստանի համար: Այսպես, անցնող տարի, ըստ մաքսային պետական կոմիտեի տվյալների, Վրաստանի տարածքով (մասնավորապես Բաթում նավահանգստով) Հայաստան է ներմուծվել 344 մլրդ 534 մլն դրամի ապրանք, այդ թվում՝ Ռուսաստանից (մոտ 84 մլրդ), Ուկրաինայից (32 մլրդ), Բուլղարիայից (29 մլրդ), ԱՄՆ-ից, Իտալիայից եւ Թուրքիայից (20-ական մլրդ): Հայաստանից արտահանված ապրանքների առյուծի բաժինը եւս անցնում է Վրաստանի տարածքով (մասնավորապես Բաթում նավահանգստով)՝ ընդամենը 138 մլրդ դրամ:

Մայսա Սարիսի «Հայ նկարչական արուեստը սկիզբէն մինչեւ մեր օրերը»

Հայ գեղանկարչութիւնը՝ թուրքերէնով

Վերջին տասնամեակներուն Պոլիս ոչ միայն գրական արտադրութիւններով սկսած է որակաւոր, մասնաւորապէս տեղ ունենալ սփիւռքի զանազան մշակութային կեդրոններու կողքին, այլեւ փայլիլ նաեւ գեղարուեստական շարք մը ալպոմներու հրատարակութեամբ, սկսած Բարսեղ Թուղլաճեանի աշխատանքներէն, նուիրուած Օսմանեան կայսրութեան մեծագոյն ճարտարապետ Միմար Սինանին եւ Պալեան գերդաստանին, որոնց ձեռակերտները մինչեւ այսօր հիացումի միայն կը ծնին, շարունակուած հայ կեանքի եւ անձերու, սովորութիւններու, տարազներու նուիրուած Արմէն Եարմանի մեծածաւալ եւ ճոխ պատկերազարդ գունաւոր ալպոմով, եւ ահա արդէն հրապարակի վրայ գտնուող Մայսա Սարիսի հայ նկարիչներու նուիրուած գեղատիպ հրաշալի գունաւոր հատորով 32x24 չափերով, բաղկացած 262 էջերէ, բազմաթիւ (367) գունաւոր մեծ եւ փոքր նկարներու վերարտադրութիւններով, որոնցմէ շատերը լոյս կը տեսնեն առաջին անգամ:

Հատորը լոյս տեսած է թրքերէն լեզուով, «Ակօս» շաբաթաթերթի տպարանէն: Հակառակ որ թրքերէն լեզուի իմ ծանօթութիւնս բաւարար չէ պատշաճօրէն գրախօսելու այս արժէքաւոր հատորը, սակայն 2002 թուականի ամառը, կարճ ժամանակով առիթ ունեցայ «Ակօսի» խմբագրատան մէջ հանդիպում ունենալու շնորհալի հեղինակին եւ տեսնելու, թէ ինչպիսի գիտակցութեամբ եւ լրջութեամբ նուիրուած էր գործին պատրաստութեան, մինչեւ իսկ այդ կարճ ժամանակը օգտագործելով կարգ մը լուսաբանութիւններ խնդրեց Իտալիոյ մէջ գործող ծանօթ երիտասարդ հայ նկարիչներու, Մուրատ-Ռափայէլեան վարժարանի շրջանաւարտ կամ ոչ, որոնց մասին լսած ըլլալով հանդերձ կը պակսէին մանրամասնութիւններ:

Տիկին Մայսա Սարիս, ծնեալ Երէցեան, պարզ սէր մը չէ, ունի գիտարուեստական պատրաստութիւն, ծնած է Պոլիս, յաճախած տեղւոյն Անարատ յղութեան հայ քոյրերու վարժարանը, շարունակելով նոթրը դամ դը Սիոն ֆրանսական Լիսէին մէջ, Պոլսոյ համալսարանի ֆրանսական բանասիրութեան ճիւղին արձանագրուելով կրցած է Միմար Սինան համալսարանի (Պոլիս) արուեստի ճիւղին հետեւիլ եւ այդ տարիներէն այս երիտասարդ հայ կնոջ սրտին մէջ ծնած է մեծ փափաք մը հայկական նկարչութիւնը ծանօթացնելու թուրք հասարակութեան:

Կարդացած է բազմաթիւ գիրքեր, որոնց ցանկը շուրջ չորս էջ կը գրաւէ հատորին վերջաւորութեան:

Յատուկ կերպով կը շեշտէ Երուանդ Կոմէլեանի, Սարգիս Սերոբեանի եւ Հրանդ Տինքի անձնական գրադարաններէն օգտուած ըլլալը, ինչպէս նաեւ պրպտած է բազմաթիւ կենսագրական բառարաններ, «Հայկական սովետական հանրագիտարանը, Շահէն Խաչատուրեանի հրատարակութիւնները», ԹԷՈԹԻԿի ամբողջ հաւաքածոն եւ «Ամի դէ միւզէ տԱրմէնի» եւ նմանատիպ գիրքեր զանազան լեզուներով: Մայսայի բծախնդրութիւնը եւ կատարեալ ըլլալու ձգտումը զինք տարած է մինչեւ իսկ միջազգային աճուրդներու հին ցուցակներ թերթատելու, ուր օսմանեան շրջանի բազմաթիւ անյայտ հայ նկարիչներ յայտնաբերուած է:

Երբ իրեն հանդիպեցայ, արդէն երրորդ տարին էր, որ ինքզինք զրկած էր արձակուրդէ այս հրաշալի գործը գլուխ հանելու համար:

Ունէր մեծ մտահոգութիւն գտնելու որակաւոր տպագրութիւն ապահովող հիմնարկ մը այդքան յոգնութենէն վերջ: Թելադրեցի զանազան հաստատներ, սակայն բոլոր դիմումնագիրները անպատասխան մնացած ըլլալով, պարոն Հրանդ Տինք, «Ակօս» հրատարակչութեան պատասխանատու տնօրէնը, քաջութիւնը ունեցած է ձեռնարկելու այս հրաշալի հատորին լոյս ընծայումը, որ պատիւ կը բերէ ոչ միայն հեղինակին եւ հրատարակչատան, այլեւ պոլսահայութեան, որ իր ծոցին մէջ տակաւին ունի ծածկեալ գանձեր, որոնք պատիւ կը բերեն համայն հայութեան:

Օննիկ Աւետիսեանի կոթողային գործէն ի վեր, լոյս տեսած 1959-ին Գահիրէի մէջ «Հայ նկարիչներ եւ քանդակագործներ» տիտղոսով, ֆրանսերէն լեզուով, տիկին Մայսա Սարիս կու գայ լրացնելու բաց մը, որ մասամբ միայն գոցուած էր պատահական յօդուածներով կամ մասնագիտական աշխատանքներով, զանազան հանդէսներու մէջ գրուած:

Ինծի ուղղած վերջին երկտողին մէջ հեղինակը այժմ նոր երազ մը կը սնուցանէ... Կարենալ այս հատորը հայերէն եւ անգլերէն լեզուներով ալ լոյս ընծայել: Ինչո՞ւ չէ: Մաղթենք, որ Աստուած մեծահոգի բարերար մը հանէ իր դիմաց:

ՎՐԴ. ՊԷՏԻԿԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
Վենետիկ

Գեղեցիկը տեսնելու կարողությամբ

Որքան բան է աննկատ մնում մեր կոպտացող հայացքներից եւ որքան ենք հաճախ անհաղորդ աշխարհի գեղեցկություններին, որոնք, սակայն, կարելի է տեսնել ամենուր եւ ամեն տեղ, միայն եթե ուզում ես:

Նելլի Գրիգորյանն իրերի մեջ էսթետիկա տեսնելու իր նրբին կարողությունները վերածում է արվեստի: Բնության մերկությունը փորձում է յուրովի «զգեստավորել»՝ նոր շնչառությամբ, նոր գույներով: Երեւակայությամբ ամեն չորացած ճյուղից ու տերեւից վերընձյուղում է գոյության նոր ձեւ, ստեղծելով անսովոր հմայիչ աշխարհ: Ընտրություն չի կատարում, պատահական ճյուղն ու տերեւը թելադրում են կոմպոզիցիայի ձեւը, որ լրացվում է բազմազան մանր դետալներով՝ ուլունքներով, դրասանգներով, վարդերով: Աշխատանքները (ծաղկե կոմպոզիցիաներ եւ կոլաժներ) կատարում է հիմնականում բնական հումքով, արծաթափայլ ու ոսկեփայլ բրոնզը կոմպոզիցիաներին տոնականություն է հաղորդում: Նելլի Գրիգորյանն օգտագործում է բուսականության ամեն մանրուք՝ ճյուղեր, տերեւներ, սերմեր, հունդեր, պտուղներ, ծաղիկներ: Կոլաժային աշխատանքների համար օգտագործված են ուլունքաշարեր, կանացի զանազան զարդարանքներ, ժապավեններ, ժանյակներ, կտրված սպասքի կտորտանքներ, ապակու զանազան բեկորներ: Ծաղկամանների մի մասը օծանելիքի տուփեր են՝ բրոնզափայլ, արծաթափայլ նորացված, վերափոխված տեսքով, ցորենի հասկեր, մասրենու ճյուղեր, ծաղկած ծառ ադիբուդիներով, կոմպոզիցիա ընկույզներով, եղեւնու կոներով, ուլունքաշարերով, նռներով, արեւածաղկով, աչքից ոչինչ աննկատ չի անցնել:

Թվով 115 կոմպոզիցիաների եւ 18 կոլաժային աշխատանքների ցուցահանդեսով Նելլի Գրիգորյանը վերջերս հանդես եկավ «Առագաստ» սրճարանի ընդարձակ սրահում: Արձագանքներն ու հետաքրքրությունները բավականին մեծ էին, հիացմունքն ու հաճելի զգացողությունները նույնպես: Ցուցահանդես-վաճառքը տեւեց 8 օր՝ այցելուների համար ստեղծելով թեթեւ, գեղեցիկ, տոնական տրամադրություն: Իսկ վաճառքից գոյացած հասույթը որոշված էր հատկացնել մանկատներին:

Մասնագիտությամբ Նելլի Գրիգորյանը բանասեր է եւ ԵՊՀ թանգարանի բաժնի վարիչի աշխատանքը սիրով զուգակցում է իրերի աշխարհում գեղեցիկը փնտրելու այս զբաղմունքին: «Ես ցավ եմ ապրում, որ տարիների ապրած ծառերը հատվում ու թափվում են, երկրորդ կյանք եմ ուզում տալ նրանց արվեստի մեջ, եւ ինձ համար ծառահատումից մի փոքրիկ մասն անգամ փրկելու առիթ է: Կարծում եմ, ծառահատում միշտ է լինելու, եւ սա իմ բողոքի ճիչն է»:

Մ. Բ.

Նշվել է միջազգային մրցանակաբաշխությունում

ԵՐԵՎԱՆ, 16 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի Երաժշտական ընկերության «Շողակն» կամերային երգչախմբի հայ հոգեւոր երաժշտության «Ծառ կենաց» ձայնասկավառակը ԱՄՆ-ի «Jeannie SCMPC Angel Award» ամենամյա միջազգային մրցանակաբաշխությունում արժանացել է «Ադամանդյա լուսապսակ» հատուկ մրցանակի:

Ինչպես հայտնեց «Շողակնի» գեղարվեստական ղեկավար Արմեն Ամիրխանյանը, Սբ. Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրման 1700-ամյակին նվիրված ձայնասկավառակում ընդգրկված են հայ հոգեւոր երաժշտության գլուխգործոցները 5-րդ դարից մինչեւ միջնադար եւ մեր օրերը, ինչպես բնագրով, այնպես էլ երգչախմբի համար կատարված փոխադրումներով: Արմեն Ամիրխանյանը նշեց, որ երգչախումբը առաջին անգամ ներկայացրել է Գեւորգ 6-րդ Չորեքչյան Ամենայն Հայոց կաթողիկոսի մշակած մի քանի հոգեւոր երգեր:

Ձայնագրությունները կատարվել են Երեւանի «Mineral records» ստուդիայում, սակայն ձայնասկավառակը թողարկել է ԱՄՆ «M.A.D. Fine Art» ստուդիան:

ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հանդիսություն՝ հոգեւոր խորհրդով...

Վերջերս Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպվել էր Խաժակ Տեր-Գրիգորյանի «Դիվան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի» աշխատության շնորհանդեսը, որը սկսվեց Սպահանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Շահան ծ. վրդ. Սարգսյանի աղոթքով եւ օրհնությամբ, ապա շարունակվեց Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի խոսքով.

- Խաժակ Տեր-Գրիգորյանի աշխատասիրությամբ «Դիվան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի» կաթողիկոսական նամակների եւ կոնդակների ժողովածուն բացառիկ երեւույթ է մեր հասարակական կյանքում: Այն իսկապես բարդ ու աշխատասար գործ է, որ կատարել է լուսահոգի Խաժակ Տեր-Գրիգորյանը, մարդ, որին ճանաչողները վստահաբար կարող են ասել եւ հաստատել իմ այն համոզմունքը, որ ինչ անում էր Խաժակ Տեր-Գրիգորյանը, անում էր խնամքով եւ ամենայն պատասխանատվությամբ:

Անդրադառնալով աշխատության լույսընծայման կարեւորությանը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն ասաց.

- Տարին հոբելյանական է բոլորիս համար, քանզի Նոր Ջուղայի հիմնադրման 400-ամյակն է, հոգեւոր կենտրոնի, որը մշակութային թռիչք է մեզանում: Ծանոթանալով ժողովածուի նյութերին, տեսնում ես, որ պատահական չեն ընտրված Փիլիպպոս կաթողիկոսի, Հակոբ Ջուղայեցու նամակները, քանզի ազգային-ազատագրական շարժումների ընդհանուր համատեքստում Նոր Ջուղան ներկայանում է միանգամայն այլ հարթության վրա, որն անչափ կարեւոր է: Հայ առաքելական եկեղեցու պատմությունն ուսումնասիրելու եւ ընթերցող հանրությանը ներկայացնելու տեսանկյունից Խաժակ Տեր-Գրիգորյանը շատ շնորհակալ աշխատանք է կատարել:

Խաժակ Տեր-Գրիգորյանը ծնվել է Իրանում, մանկությունը եւ երիտասարդությունն անցել է Թեհրանում: Տարրական եւ միջնակարգ կրթությունը ստացել է Թեհրանի հայոց ազգային դպրոցներում: Ուսումը շարունակել է Սպահան քաղաքի ու Գերմանիայի Մայնց քաղաքի համալսարանների հայագիտական եւ պատմության ֆակուլտետներում, Սորբոնի համալսարանի պատմության ինստիտուտում: Պարբերաբար համագործակցել է «Ալիք» (Թեհրան) եւ «Յառաջ» (Ֆրանսիա) թերթերի հետ: Գալով Հայաստան, 1990-ին հիմնադրում է «Ազատամարտ» թերթը: 2001-ին Խաժակ Տեր-Գրիգորյանը կնքեց իր մահկանացուն:

Ու թեեւ կյանքի գերակշիռ մասն ապրել է սփյուռքում, սակայն նրա գործունեության հիմնական նպատակը թե՛ մայր հայրենիքում եւ թե՛ արտերկրում եղել է հայրենասիրությունը, ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի կերտումը:

Գրքի շնորհանդեսին ներկա էին նրա մտերիմները, մտավորական գործընկերները, հոգեւոր այրերը: Ի դեպ, վերջերս Հայաստանի ազգային գրադարանը լույս ընծայեց Խաժակ Տեր-Գրիգորյանի «Կենսամատենագիտություն» գրքույկը:

ՆԵԿՏԱՐ ԳԵՂԱՄՅԱՆ

Երեւանցի բանաստեղծը՝ Մոսկվայի «Պոեզիայի ակադեմիա» ալմանախի էջերում

ԵՐԵՎԱՆ, 16 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Շուրջ երկու տարվա ընդմիջումից հետո Մոսկվայում այս տարի կրկին հրատարակվել է «Պոեզիայի ակադեմիա» ամենամյա ալմանախը, որը կազմել եւ հրատարակել են տեղի նույնանուն հրատարակչության աշխատակիցները: Ներկա հրատարակությունը նվիրված է ռուս մեծ բանաստեղծ Ֆյոդոր Տյուտչեւի ծննդյան 200-ամյակին:

Академия
Поэзии
Мы отмечаем
в этом году
200-летие
великого русского
поэта
Фёдора
Ивановича
Тютчева
2003

Ալմանախում ռուս, վրացի, հրեա եւ այլազգի անվանի պոետների կողքին՝ Ռասուլ Համզատով, Գլեբ Գորբովսկի, Թիմուր Զուլֆիկարով, Բորիս Օլեյնիկ, Եվգենի Ռեյն, Վալենտին Սորոկին եւ այլք, իր պատշաճ տեղն է զբաղեցրել երեւանցի պոետ Աշոտ Սարգսյանը:

Նա ավարտել է մայրաքաղաքի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետը, երկար տարիներ աշխատել անվանի կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի հետ: Նրա հեղինակած կինոսցենարները եւ բանաստեղծությունները լույս են տեսել «Սովետական արվեստ» եւ «Գարուն» հանդեսներում: Այս ժողովածուում Սարգսյանը ներկայացել է քնարական-փիլիսոփայական բանաստեղծությունների շարքով:

Նկարչական եռուզեռ

Մարտի 18-ին Վիեննայում բացվելու է Վասիլի Կանդինսկու նկարների ցուցահանդեսը, որին ներկայացվելու են նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի սեփականությունը համարվող երեք աշխատանք:

Հայաստանից Իտալիա է «գնալու» Մարկ Շագալի «Ամառանոցում» աշխատանքը: Մարտի 24-ին այստեղ բացվելու է Շագալի անհատական ցուցահանդեսը:

Ապրիլին Հայաստանում կայանալու է ռուսական արվեստի շաբաթ, որի ժամանակ կցուցադրվեն ոչ միայն Ռուսաստանի թանգարաններում եղած գործերը, այլեւ մեր պատկերասրահում պահվող ստեղծագործությունները:

Ա. Ա.

ԾԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



Հավաքը Լիլում, ընտրական մրցաշարը Շեֆիլդում

Ինչպես տեղեկացրել ենք, մարտի 15-ին Երեւան-Փարիզ չվերթով Ֆրանսիա մեկնեց Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը, որը մինչեւ մարտի 22-ը ֆրանսիական հայտնի Լիլ քաղաքում անցկացնելու է ուսումնամարզական հավաք նախապատրաստվելու մարտի 24-ին Անգլիայում կայանալիք ընտրական մրցաշարին: Ինչպես տեղեկացանք ՀՖՖ մամուլի ծառայությունից, հավաքականը Ֆրանսիա է մեկնել **Սուքիասով, Սուքիասյան, Սիմոնյան, Օսեյան, Ստեփանյան, Գեւորգյանց, Աբրամով, Հայրապետյան, Նդմբուկ, Մանուչարյան, Հովհաննիսյան, Մանվելյան, Մ. Մարգարյան, Խաչատրյան, Ա. Մարգարյան, Սաֆարյան, Սահակյան** կազմով: Սուրեն Խաչատրյանը հավաքականին կմիանա Ֆրանսիայում: Հավաքականի մարզիչներն ու մասնագետներն ուսումնամարզական հավաքի վայր են ընտրել ֆրանսիական Լիլը, որովհետեւ այդ քաղաքի բնակլիմայական պայմանները գրեթե նույնությամբ համապատասխանում են անգլիական Շեֆիլդի պայմաններին, ուր անցկացվելու է մրցաշարը:

Մեկնումից առաջ «Հրազդան» հյուրանոցում մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականի հետ հանդիպում ունեցան ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը, հավաքականի մարզչական շտաբը՝ գլխավոր մարզիչ Խորեն Հովհաննիսյանի գլխավորությամբ: Նշվեց, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան արել է ամեն ինչ Անգլիայում մեր հավաքականի հաղթանակի նախադրյալներ ստեղծելու համար եւ Հայաստանի ողջ հանրությունը սպասում է մեր պատանիների հաղթանակին: Հաջողություններ մաղթելով մեր հավաքականին, նշվեց, որ նրանց հաղթանակը մեծ ոգեւորության առիթ կտա եւ մեծապես կնպաստի մեր ֆուտբոլի զարգացմանը, ուստի պատանիները պետք է հանդես գան մեծ պատասխանատվությամբ ու կարգապահությամբ, քանի որ խաղային պատրաստվածությամբ չեն զիջում իրենց մրցակիցներին: «Միայն հաղթանակ». սա է լինելու այն համոզումը, որով հանդես են գալու մեր պատանիները եւ որը մեր պատանիներին մաղթեցին թե ֆեդերացիայի նախագահը, թե հանդիպմանը ներկաները:

ՀՖՖ-ի մամուլի ծառայությունը տրամադրել է որոշ տվյալներ Շեֆիլդի մասին, որոնք ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը: Շեֆիլդը հիասքանչ բնությամբ գեղեցիկ քաղաք է Անգլիայի կենտրոնում: Այն Լոնդոնից մեքենայով երկու ժամվա հեռավորության վրա է: Շեֆիլդն Անգլիայի Յորքշայրի մարզի 2-րդ, իսկ Անգլիայի մեծությամբ 4-րդ քաղաքն է:

Յորքշայրի մարզը գտնվում է Անգլիայի հյուսիս արեւելքում: Հայտնի է որպես բրդյա գործվածքի արդյունաբերական կենտրոն: Շեֆիլդն ունի 500 հազար բնակիչ: Շեֆիլդն առաջին քաղաքն է, որին Մեծ Բրիտանիայի սպորտային կոմիտեն շնորհել է «ազգային սպորտային քաղաքի» կոչում: Ֆուտբոլային հիասքանչ խաղադաշտերից ու լողավազաններից բացի, այստեղ է գտնվում նաեւ դահուկային սպորտի Եվրոպայի ամենամեծ արհեստական առողջարանը:

PHOTOLURE

Հայաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականը հանգրվանելու է Շեֆիլդի «Մարիոտ» հյուրանոցում, որը «Մարիոտ» ցանցի լավագույն հյուրանոցներից է համապատասխան եվրոպական բոլոր չափանիշներին: Այն դասակարգվում է 4 աստղանի հյուրանոցների շարքում եւ ներկայացված է 5 աստղանիի դասակարգման: Քաղաքի կենտրոնից հեռու է մոտ 1,5 կիլոմետր: Հյուրանոցն ունի երկու ռեստորան, հրաշալի լոբբի, զվարճանքի համար նախատեսված բազմաթիվ հարմարություններ, ինչպես նաեւ թեյարան, մարզաառողջարանային համալիր, փակ լողավազան, սաունա, վարսավիրանոց եւ այլն: Բոլոր ննջասենյակներն ունեն արբանյակային ալեհավաք, օդափոխության համակարգ եւ այլն: Հյուրանոցի շրջակայքում են «Դոն Վելի» մարզադաշտը, «Փիք Դիսթրիքթ» ազգային զբոսայգին, երաժշտական ակումբներ, թատրոններ, Շեֆիլդ Արենան եւ Շեֆֆիլդ «Սֆայ վիլլիջը»:

Ուելսցիները դիմել են հայտնի փորձագետի օգնությանը

Վաղը ՈՒԵՖԱ-ն քննարկելու է Ուելսի ֆուտբոլի ֆեդերացիայի բողոքը կապված եգոր Տիտովի գործի հետ: Ուելսի ներկայացուցիչները մեկ անգամ եւս կփորձեն համոզել ՈՒԵՖԱ-ին պարտություն գրանցել ՌԴ հավաքականին եւ վերջինիս փոխարեն իրավունք ստանալ մասնակցելու Պորտուգալիայում կայանալիք ֆուտբոլի Եվրոպայի առաջնությանը: Այդ գործում ուելսցիներին օգնելու պատրաստակամություն է հայտնել դոպինգի հարցերում հանրահայտ փորձագետ, 48-ամյա դոկտոր Քրիստինա Այոսը: Ուելսի պատվիրակության կազմում կլինեն նաեւ հավաքականի գլխավոր մարզիչ Մարկ Հյուզը, ինչպես նաեւ 46-ամյա փաստաբան Թիմ Կերին, որը «Չելսիի» երկրպագուն է: Վերջինս ժամանակին հանդիսացել է Նիկոլյա Անելկայի, Բրայան Լաուդրուպի եւ Լեննոքս Լյուիսի փաստաբանը դոպինգի օգտագործման հետ կապված գործերի քննության ժամանակ:

Ինչ վերաբերում է հանրահայտ փորձագետ Քրիստինա Այոսին, ապա նա մասնակցել է ժամանակին մեծ աղմուկ հանած Բեն Ջոնսոնի, Դենիս Միտչելի եւ Խավյեր Սոտոմայորի կողմից դոպինգի օգտագործման փաստերի քննարկմանը եւ ապացուցել է, որ մարզիկներն արգելված խթանիչներ են օգտագործել: Կուբայի առաջնորդ Ֆիդել Կաստրոն Այոսին կենտրոնական հետախուզական վարչության գործակալ է անվանել:

Քրիստինա Այոսը լրագրողներին հայտնել է, որ ինքն առաջիններից մեկն էր, որը 1994 թ. Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի երկրների մի շարք մարզիկների օրգանիզմում հայտնաբերել է բրոմանտան: Նա իր խնդիրն է համարում պարզել, թե հատկապես երբ է օգտագործվել Տիտովի կողմից բրոմանտանը: Նա հավաստիացրել է լրագրողներին, որ առանց որեւէ կողմնակալության կվարի հետաքննությունը:

Հայազգի Վանես Մարտիրոսյանի հաղթանակը

Քլիվլենդից (Օհայո) Ասոշիեյթեդ պրես լրատվական գործակալությունը «Արմինյն միրոր սփեքթեյթր» թերթում հաղորդում է, որ փետրվարի 29-ին բռնցքամարտի ամերիկյան օլիմպիական մրցաշարում Գլենդելից հայազգի կիսամիջին քաշային Վանես Մարտիրոսյանը 27–17 հաշվով հաղթել է Օսթին Տրաութին: Իր տասը մյուս թիմակիցների հետ նա Կոլորադո Սփրինգսում մարզվելուց հետո այժմ մասնակցում է Տիջուանայում (Մեքսիկա) անցկացվող «Ամերիկաների մրցաշարում», որը պետք է որոշի Աթենքի օլիմպիական խաղերի մասնակիցներին:

Հ. Ծ.

Հաղթողները հայտնի են

«Ամերիկանկա» մրցաձեւից բիլիարդի Հայաստանի պատանեկան առաջնության պարգեւները վիճարկեցին Երեւանի, Վանաձորի, Էջմիածնի եւ Գյումրու մարզիկները: Հաղթող ճանաչվեց Գուրգեն Մարտիրոսյանը: 2-4-րդ տեղերը զբաղեցրին Արա Գյոզալյանը, Արտյուշա Սարգսյանն ու Վիլեն Վարդանովը: Հայաստանում մարզաձեւի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար պատվոգրով պարգեւատրվեցին Հայկ Հարությունյանն ու բիլիարդի ֆեդերացիայի պատվավոր նախագահ Կառլեն Մանուկյանը: Մրցաշարի հովանավորը «Զիգզագ» խանութն էր, իսկ տեղեկատվական հովանավորը՝ «Միր սպորտա» ամսագիրը:

«Տոյոտան» հրավիրում է Շումախերին

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի վեցակի չեմպիոն Միխայել Շումախերի եղբայրը՝ Ռալֆը, որ ներկայումս հանդես է գալիս «Ուիլյամսում», հաջորդ տարի հնարավոր է տեղափոխվի «Տոյոտա»: Ճապոնական թիմի ղեկավարությունը պատրաստ է Շումախերին 12 մլն դոլարի պայմանագիր առաջարկել: Պայմանագրի կետերն արդեն քննարկվել են եւ մնում է այն ստորագրվի Շումախերի կողմից:

ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

Որոշվեցին առավել հեռանկարային թենիսիստները

ԹՕՀՄ-ի տնօրեն Ռ. Մանուկյանը պարգեւատրում է մրցաշարի հաղթող Ս. Քոթանջյանին:

Երեւանում ավարտվեց թենիսի Վազգեն Սարգսյանի 5-րդ հուշամրցաշարը: Գլխավոր մրցանակը վիճարկեցին տարիքային երկու խմբով հանդես եկող պատանիներն ու աղջիկները: Մինչեւ 14 տարեկան տղաների մրցավեճում հիանալի հանդես եկավ Սամվել Քոթանջյանը: Պատանի թենիսիստը բավական հմուտ խաղ ցուցադրեց եւ արժանիորեն դարձավ մրցաշարի հաղթող: Եզրափակիչում նա պարտության մատնեց Դավիթ Մինասյանին: Մրցանակային 3-րդ տեղը զբաղեցրեց Գեւորգ Սարգսյանը:

Մինչեւ 16 տարեկան պատանիների մրցավեճում ուժեղագույն ճանաչվեց Աշոտ Գեւորգյանը, որը վճռորոշ մրցախաղում պարտության մատնեց Հակոբ Միրիջանյանին: Լավագույն եռյակը եզրափակեց Սերգեյ Ոսկանյանը:

Աղջիկները եւս մրցեցին տարիքային երկու խմբով: 16 տարեկանների մրցաշարում բոլորից հաջող ելույթ ունեցավ Աննա Մովսիսյանը, որն էլ կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին Մանուշակ Խանյանն ու Գայանե Թումյանը: Մինչեւ 14 տարեկան թենիսիստուհիների մրցաշարում լավագույնը Զարուհի Հարությունյանն էր: Մրցանակային եռյակում տեղ զբաղեցրին նաեւ Նաիրա Խաչատրյանն ու Մարիաննա Ավետիսյանը:

Մրցաշարը հնարավորություն ընձեռեց որոշելու Հայաստանի պատանեկան հավաքականների կազմը, ի հայտ բերելու առավել հեռանկարային թենիսիստներին:

ՇԱԽՄԱՏ

Առաջատարը դարձյալ Կարեն Ասրյանն է

Տիգրան Պետրոսյանի՝ Ստեփանակերտում ընթացող հուշամրցաշարի 7-րդ փուլը անակնկալներ չմատուցեց: Միանձնյա առաջատարը շարունակում է մնալ Կարեն Ասրյանը, որը վաստակել է 4.5 միավոր: Նրանից կեսական միավորով ետ են մնում Եվգենի Սվեշնիկովն ու Տիգրան Պետրոսյանը:

Աղյուսակը 2 միավորով դարձյալ եզրափակում է Յանիկ Պելետյեն, որը հերթական պարտությունն է կրել Նախորյակին: Շվեյցարացի գրոսմայստերն, ինչպես ինքն է նշել, պատրաստվում է մրցաշարի ավարտից հետո լինել Գանձասարում, ինչպես նաեւ Արցախի մասին անհրաժեշտ գրականություն ձեռք բերել, որպեսզի լավ ճանաչի Ղարաբաղը:

8-րդ փուլում խաղասեղանի առջեւ իրենց ուժերն են չափել Սվեշնիկով-Մաչեյա, Պետրոսյան-Պելետյե, Կոբալիա-Փաշիկյան, Անաստասյան-Սարգսյան զույգերը: Այս հանդիպումների ավարտը երեւի ավելի պարզություն կմտցնի աղյուսակում առաջատարության հավակնություններում:

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Ուժեղագույնին կանվանի ավարտական տուրը

Ռեյկյավիկում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը, որի 76 մասնակիցների թվում է Գերմանիան ներկայացնող Լեւոն Արոնյանը: 21-ամյա երիտասարդ գրոսմայստերը հիանալի է հանդես գալիս մրցաշարում: Լեւոնը դեռեւս պարտություն չի կրել եւ լավ հնարավորություն ունի դառնալու մրցաշարի հաղթող: 7-րդ տուրում Արոնյանը հաղթեց լեհ շախմատիստ Միխալ Կրասենկովին, իսկ հաջորդ տուրում առաջատարներից մեկի՝ Ալեքսեյ Դրեեւի հետ վճռորոշ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Ռուսաստանցի գրոսմայստերը նախորդ տուրում էլ խաղաղ դաշն էր կնքել էմիլ Սուտովսկու հետ: Այսպիսով, ավարտական տուրից առաջ Լեւոն Արոնյանը, Ալեքսեյ Դրեեւը, Էմիլ Սուտովսկին եւ Վլադիմիր Եպիշինը 6-ական միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը: Այնպես որ, հաղթողը կորոշվի ավարտական տուրում: Հետաքրքրականն այն է, որ չորս առաջատարները վերջին տուրում մրցելու են միմյանց հետ: Արոնյանը սպիտակներով խաղալու է Սուտովսկու, իսկ Եպիշինը՝ Դրեեւի հետ: Նշենք, որ առաջատարներին հետապնդում են 9 շախմատիստներ, որոնք նրանց զիջում են ընդամենը կես միավորով: Նրանք եւս լավ հնարավորություն ունեն ճանաչվելու լավագույնը, եթե առաջատար քառյակն իր հանդիպումներն ավարտի ոչ-ոքի:

Ի դեպ, շախմատիստները պայքարում են ոչ միայն մրցաշարի հաղթողի կոչման համար: Առաջին երեք տեղերը գրաված շախմատիստներն իրավունք կստանան մասնակցելու մրցաշարի ավարտից հետո մեկնարկող արագ շախմատի մրցախաղին: Ընդհանուր առմամբ այդ մրցաշարին կմասնակցի 16 շախմատիստ, որոնք վիճակահանությամբ կբաժանվեն զույգերի եւ նոկաուտ համակարգով կորոշեն լավագույնին: Մրցաշարին կմասնակցեն Գարի Կասպարովը, Անատոլի Կարպովը, Նայջլ Շորթը եւ այլ հայտնի շախմատիստներ:

Հաստատվել է ֆուտզալի ՀՀ առաջնության խաղացանկը

Ինչպես տեղեկացանք ՀՖՖ մամուլի ծառայությունից, ՀՖՖ նախագահ Ռ. Հայրապետյանը հաստատել է 2004 թ. Հայաստանի ֆուտզալի առաջնության խաղացանկը:

2004թ. առաջնությանը մասնակցում են հետեւյալ 10 թիմերը.

1. «Ցալկուտ»	/Վանաձոր/
2. «Մալաթիա»	/Երեւան/
3. Գավառի պետական համալսարան /ԳՊՀ/	/Գավառ/
4. «Արաքս	/Երեւան/
5. «Փյունիկ»	/Երեւան/
6. «Պոլիտեխնիկ»	/Երեւան/
7. «Մոստ Գրուպ»	/Երեւան/
8. «Սպիտակ տնակ»	/Երեւան/
9. «Թալ Գրիգ»	/Երեւան/
10. «Գյումրի»	/Գյումրի/

Առաջնությունը կմեկնարկի մարտի 27-ին «Ցալկուտ»–«Գյումրի», «Պոլիտեխնիկ»–«Փյունիկ», «Սպիտակ տնակ»–ԳՊՀ հանդիպումներով: Հաջորդ օրը կկայանան մեկնարկային տուրի «Մոստ գրուպ»-«Արաքս», «Թալ Գրիգ»–«Մալաթիա» հանդիպումները:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Փողն ամբողջովին իրենք չեն ծախսում

Ըստ Հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանի, եվրոպական հեռարձակողների միությունը վերջին կես տարվա ընթացքում Հարավային Կովկասի երկրների մեջ ամենամյա ամենաբարձր վարկանիշը շնորհում է հայկական Հանրային հեռուստատեսությանն այն դեպքում, երբ վերջինս Վրաստանից 6, իսկ Ադրբեջանից 12 անգամ պակաս է ֆինանսավորվում: ԱԺ դահլիճում խորհրդի նախագահի նման փաստարկի վկայակոչումը նպատակ ուներ հակադրվելու այն դժգոհություններին, թե Հանրային հեռուստատեսությունը պետբյուջեից շատ շռայլորեն է ֆինանսավորվում: Ասենք, որ այդ հատկացումները 2 միլիարդ դրամից մի փոքր պակաս գումար են կազմում: Խորհրդի նախագահը տրտնջաց, որ այդ գումարի ընդամենը 750 մլնն է իրենցը, մնացածը գնում է կապի նախարարությանը եւ արբանյակային հեռարձակում ապահովող դրսի 2 ընկերությունների:

Կ. Գ.

Երիտասարդությունը մտահոգ է տրաֆիկինգի երեւույթից

Մարդկանց վաճառքը կամ «սպիտակ ստրկությունը» քսաներորդ դարի ամենաամոթալի եւ դաժան երեւույթներից է, որի աճը վերջին տասնամյակում, ցավոք, վտանգավոր չափերի է հասնում: Մարդկանց վաճառքը՝ տրաֆիկինգն, ի տարբերություն կազմակերպված հանցագործության մյուս ճյուղերի՝ թմրադեղերի, զենքի, գողացված մեքենաների եւ մարդկային օրգանների վաճառքի, նվազագույն ռիսկի պայմաններում անհավանական շահույթներ է ապահովում կազմակերպիչներին: Իսկ «զոհերին» սպասում են նվաստացում, բռնություն, հիվանդություններ, անպատվություն եւ մահ:

Օրերս Հայաստանի ամերիկյան համալսարանում գումարվել էր ծավալուն համաժողով, որը կրում էր «Մարդկանց տրաֆիկինգը Հայաստանում աճող հիմնախնդիր» խորագիրը: Համաժողովի կազմակերպիչներն էին Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)-«Շիտակ» ՀԿ-ն ՀԱՀ-ի իրավաբանական ֆակուլտետը: Համաժողովին մասնակցում էին մի շարք շահագրգիռ գերատեսչությունների, ՀԿ-ների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ուսանողներ: Կազմակերպիչները ջանացել էին հրավիրել գիտակ մասնագետների, որոնք տեղյակ էին պրոբլեմի ծագման ու հայտնաբերման խնդիրներին:

Համաժողովի ընթացքում պարզ դարձան երկու ամիս առաջ հայտարարված տրաֆիկինգի թեմայով «Լավագույն հոդված» մրցույթի հաղթողները: Ներկայացված 14 աշխատանքներից հաղթեցին երկուսը, առաջին տեղ՝ Էմմա Հակոբյան, երկրորդ տեղ՝ Էդուարդ Ասլանյան: Կազմակերպիչների նպատակն է եղել «առավելագույնի հասցնել համաժողովի մասնակիցների, մասնագետների ու միջազգային կազմակերպությունների, նաեւ ԱՄՆ դեսպանության հետաքրքրությունն ու թիվը, քանզի ժամանակն է, որպեսզի այս մեծ չարիքի՝ մարդկանց տրաֆիկինգի արգելման ուղղությամբ մասնագիտացված կազմակերպությունների ջանքերին գումարվեն նաեւ երիտասարդության լայն խավերի եռանդն ու ավյունը», նշեց «Շիտակ» ՀԿ-ի հակատրաֆիկինգային խմբի ղեկավար Էմիլիա Հովհաննիսյանը եւ տեղեկացրեց, որ արդեն բացել են հատուկ ինտերնետային էջ՝ www.avmlawreview.org, որտեղ կտեղադրվի այն ամենը, ինչ վերաբերում է տրաֆիկինգին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Պետությունների ղեկավարների մեջ ամենահարուստը Սաուդ. Արաբիայի թագավորն է

Ամերիկյան «Ֆորբս» հանդեսը հրապարակել է պետությունների ամենահարուստ ղեկավարների ցանկը, ինչպես նաեւ Մեծ յոթնյակի երկրների ղեկավարների ունեցվածքի վարկանիշները: Ցանկը գլխավորում է Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդ բեն Աբդ ալ Ազիզ ալ Սաուդը: Նրա կարողությունը գնահատվում է 25 մլրդ դոլար: Մեծ յոթնյակի երկրների ղեկավարների մեջ առաջինն Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին է, որի կարողությունը երկուսուկես անգամ զիջում է Ֆահդ թագավորի ունեցվածքին, բայց 40 անգամ գերազանցում է Մեծ յոթնյակի մյուս բոլոր ղեկավարների համատեղ կարողությանը:

Վարկանիշ կազմողները խոստովանում են, որ պետական ղեկավարների ունեցվածքի գնահատումը բարդ գործ է: Երբեմն դժվար է գահակալի ունեցվածքը զատել համազգային ունեցվածքից (օրինակ՝ Լոնդոնի Բուքինգհեմյան պալատը): Բացի դրանից, որոշ ղեկավարներ պաշտոնավարությունից առաջ իրենց ունեցվածքի տնօրինումը ձեւականորեն հանձնում են երրորդ անձանց: «Ֆորբսը» գնահատումներ կատարելիս հաշվի է առել ղեկավարներին պատկանող հողերը, անշարժ կայքը, բաժնետոմսերը եւ մյուս ակտիվները: Հարստությամբ Ֆահդ թագավորին հաջորդում են ԱՄԷ-ի նախագահը, Բրունեյի սուլթանը եւ Դուբայի թագաժառանգ իշխանը:

Եվրոպացի ղեկավարների մեջ ամենահարուստը Լիխտենշտեյնի իշխան Հանս Ադամ Բ-ն է: Մեծ հարստության տեր են նաեւ Յասեր Արաֆաթը եւ Ֆիդել Կաստրոն: Մեծ յոթնյակում Սիլվիո Բեռլուսկոնիին (10 մլրդ դոլար) հաջորդում են Կանադայի վարչապետ Պոլ Մարտինը (225 մլն), ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը (15 մլն), Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը (9 մլն), Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը (3 մլն), Ճապոնիայի վարչապետ Ջյունիչիրո Կոիձումին (2 մլն): Մեծ յոթնյակի ղեկավարների մեջ «ամենաաղքատը» Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերն է, որի ունեցվածքը գնահատվում է ընդամենը 1 մլն դոլար:

Պ. Ք.

Շնորհակալության խոսք

Երեւանի թիվ 1 պոլիկլինիկայի եւ «Հայէկոնոմ բանկի» երկար տարիների աշխատանքային իրենց համագործակցությունից գոհունակություն հայտնելով՝ պոլիկլինիկայի աշխատակցուհի, գանձապահ Ելենա Վանյանը շնորհակալություն է հայտնում բանկի սպասարկման բաժնի վարիչ Կարինե Հարությունյանին, աշխատակցուհիներ Սուսաննա Դիլբարյանին եւ Բերտա Սարգսյանին բարեկիրթ սպասարկման եւ մարդկային վերաբերմունքի համար:

Ջերմամատակարարման վերականգնման փորձնական ծրագրերի մասնակցության հրավեր

Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ընկերակցությունից ստացել է վարկի կանխավճար՝ քաղաքային ջերմամատակարարման առաջարկվող ծրագրի նախապատրաստման համար, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետության քաղաքներում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի ջեռուցման համակարգերի վերականգնման փորձնական ծրագրեր: Ծրագրերի իրականացման համար ընտրվելու են սահմանված չափորոշիչներին համապատասխանող բազմաբնակարան շենքեր: Փորձնական ծրագրերում ընդգրկված շենքերի կառավարման մարմինները եւ մասնավոր ընկերությունները հնարավորություն կունենան ստանալու շուկայականից զգալիորեն ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ (մինչեւ 10 տարի ժամկետով) նպատակային փոխառություն: Ներդրումային գումարների մի մասը կարող է տրամադրվել դրամաշնորհի ձեւով, որոնք կուղղորդվեն նախագծային աշխատանքների, պաշտոնական ձեւակերպումների, անհրաժեշտ լիցենզիաների եւ սերտիֆիկացման ծախսերը հոգալու համար:

Տրամադրվող միջոցները կարող են օգտագործվել շենքերի ջերմամատակարարման համակարգերի, ինչպես նաեւ դրանց սնող կաթսայատների վերականգնման կամ վերակառուցման նպատակով: Վերակառուցման շնորհիվ սպառողները հնարավորություն կունենան կարգավորելու ստացվող ջերմության քանակն ըստ իրենց պահանջարկի եւ հնարավորությունների՝ ընդհուպ անջատելը եւ սպառված ջերմային էներգիայի քանակը հաշվառելը:

Փորձնական ծրագրի նպատակն է ցուցադրել՝ ա) ջեռուցման տարբեր տարբերակներով որակապես նոր եւ տնտեսապես շահավետ ջեռուցման իրականացումը բազմաբնակարան շենքերում, բ) բազմաբնակարան շենքերի բնակիչների համատեղ գործողությունների առավելությունները:

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության «Ջերմամատակարարման եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը կաջակցի փորձնական ծրագրի համար ընտրված բազմաբնակարանային շենքերի կառավարման մարմիններին եւ առանձին սեփականատերերին փաստաթղթերի նախապատրաստման գործում: Փորձնական ծրագրի շենքերն ընտրվելու են մրցույթով, որի կարգը սահմանում է ծրագրի կառավարման խորհուրդը:

Փորձնական ծրագրին մասնակցության ցանկություն ունեցող բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները, մասնավոր ընկերությունները եւ անհատ քաղաքացիները կարող են իրենց հետաքրքրությունների մասին հայտերը մինչեւ ապրիլի 9-ը ներկայացնել ծրագրերի իրականացման գրասենյակ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել «Ջերմամատակարարման ԾԻԳ» հետեւյալ հասցեով՝ Երեւան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ, 503 սենյակ: Հեռախոսահամարներ՝ 545-149, 545-148, 545-147, էլ. փոստ tsparm@intertel.am

Միաժամանակ տեղեկացվում է, որ փորձնական ծրագրերի ընտրության ընթացակարգերի վերաբերյալ մարտի 19-ին կկայանա սեմինար, որին մասնակցելու ցանկություն ունեցողները կարող են գրանցվել վերը նշված հասցեով մինչեւ ս. թ. մարտի 17-ը:

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 16-ի նիստում, որը վարում էր բանկի նախագահ Տ. Սարգսյանը, որոշեց փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում:

ԿԲ խորհուրդը պաշտոնական պարզաբանում տվեց «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը եւ հրապարակումը» կանոնակարգ 3-ի 7,14,18,19,20,22,25 կետերի եւ «ՀՀ ԿԲ խորհրդի 2003 թ. մարտի 25-ի թիվ 126-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» թիվ 401 Ն որոշման կիրառման վերաբերյալ:

ԿԲ խորհրդի որոշմամբ գրանցվեց «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի «Տաշիր-Ագրո», «Արթիկ-Ագրո», «Նժդեհ» եւ «Գավառ» մասնաճյուղերի գործունեությունների դադարեցումը:

Խորհրդի որոշմամբ արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիաներ տրամադրվեցին անհատ ձեռնարկատերեր Արթուր Բոգոմազովին եւ Գոհար Աղալարյանին: ԿԲ խորհուրդն ուժը կորցրած ճանաչեց արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու թիվ 299 լիցենզիան:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի N 1931-Ն որոշմամբ, «Լույս» հրատարակչություն» ՓԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերն ուղղակի վաճառքի ձեւով աշխատավորական կոլեկտիվին մասնավորեցնելու նպատակով ս. թ. ապրիլի 19-ին, ժամը 1:00-ին ընկերության վարչական շենքում (հասցեն՝ ք. Երեւան, Իսահակյան 28) հրավիրվում է կոլեկտիվի անդամների ժողով:

Խնդրում ենք «Պետական գույքի մասնավորեցման մասին» օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան կոլեկտիվի անդամ համարվող բոլոր անձանց մինչեւ ս. թ. ապրիլի 16-ը, ժամը 17:00 գրանցվել ընկերությունում բացված կոլեկտիվի անդամ համարվող անձանց գրանցամատյանում:

Օրակարգ

1. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերն առաջարկված գնով գնելու հարցը
2. Նախաձեռնող խմբի ընտրություն
3. Բաժնետոմսերի բաշխում աշխատավորական կոլեկտիվի անդամների միջեւ:

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

• ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ •

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի բաժանորդների

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերությունը տեղեկացնում է բաժանորդներին, որ շարունակվում է խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների դիմաց առաջացած պարտքերի մարման գործընթացը:

Օրենքով սահմանված վճարման արտոնություններից օգտվելու համար պայմանագիր չունեցող բաժանորդներին անհրաժեշտ է մինչեւ ս. թ. մարտի 31-ը ներառյալ դիմել ընկերության մասնաճյուղեր եւ տեղամասեր:

Նշված ժամկետից հետո պայմանագիր չունեցող բաժանորդների պարտքն ամբողջությամբ ենթակա է գանձման գործող կարգի համաձայն:

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդրում ենք բոլոր կազմակերպություններին եւ քաղաքացիներին Ռուդոլֆ Հովիկի Ազարումյանի (ծնվել է 1940 թ.), Վալենտինա Նիկոլայի Ազարումյանի (ծնվել է 1941 թ.), Օկսաննա Ռուդոլֆի Ազարումյանի (ծնվել է 1967 թ.), Հովակիմ Ռուդոլֆի Ազարումյանի (ծնվել է 1969 թ.) եւ Դավիթ Ռուդոլֆի Ազարումյանի (ծնվել է 1982 թ.) (բնակվել են Երեւանի Այգեձոր փողոցի թիվ 18 տանը) վերաբերյալ իրենց հայտնի տեղեկությունները հայտնել Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան կամ զանգահարել 24-01-61 հեռախոսահամարով:

For Your Internal News of Armenia Log on to

In Armenian, Russian, English and Turkish

ՀՀ Կենտրոնական բանկը 17.03.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	561.87	556.30	567.50
EUR	1	եվրո	693.91	689.70	698.10
RUR	1	ռուս. ռուբլի	19.71	18.50	20.90

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա. Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000. Ստորագրուած է տպագրութեան՝ 16. 03. 2004. Գինը՝ 100 դրամ